Պատմվածք, Արձակ, Հայ գրականություն

13+

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՆՐԱՆՔ, ՈՐ ՓՈԽՎԵՑԻՆ

Անկեղծ բարեկամիս՝

Չարենցին

նրա գրական գործունեության

քսանամյակի առթիվ:

«Որովհետև յուրաքանչյուր անգամ

նրանք գալիս են ուրույն ճանապարհով և յուրաքանչյուր անգամ՝ անսպասելի…»:

Բենվենուտո Չելլինի.

«Ինքնակենսագրություն», մաս 2, գլ. 2:

1

Ես գնացքից իջա փոքրիկ կայարանում և զարմանքով նայեցի շուրջս: Սխալ չե՞մ իջել: Ա՞յս կայարանն է...

Ստուգեցի: Սխալ չկար: Բայց որտե՞ղ է այդ դեպքում հանգստի տունը:

Լռվա ձորն էր: Աջ ու ձախ, պատերի նման, կանգնել էին անտառախիտ սարերի զույգ շարքերը: Ետևում և առջևում՝ ոլորապտույտ ձորի կորչող ծայրերը: Ոչ մի լանջի վրա չէր երևում ոչ մի շենք: Դե եկ գտի՛ր հանգստի տունը:

Մտա կայարանի շենքը: Դիմեցի առաջին հանդիպած մարդուն: Շոգից քրտնաթաթախ՝ նա հառաչեց և մելամաղձոտ կերպով ցույց տվեց մի ոտնահետքի ուղի, որը գնում էր ռելսերին զուգահեռ.

— Գնա՛: Թեքվի՛ր: Բարձրացի՛ր:

Գնամ, թեքվեմ, բարձրանամ: Կարճ էր ասված: Ավելի կարճ, քան պետք էր: Բայց ես գնացի:

Իմ կողքով գնում էին ռելսերը, իսկ մյուս կողքով հոսում էր պղտոր Դեբեդը: Բացի դրանցից և բացի իմ ոտքերի տակ ձգվող նեղ կածանից, ձորում ամեն ինչ կանաչ էր՝ հատակից մինչև կատարները: Ամենից ներքևում, ջրի ափին և ռելսերի մոտ, բուսել էին մորու, մասուրի և վայրի խաղողի թփեր: Ավելի վերևում, թե աջ և թե ձախ, լանջերը ծածկված էին ոչ հաստաբուն, բայց սաղարթախիտ ծառերով:

Կարծում էի, թե հով պիտի լիներ: Եվ իրոք, առաջին րոպեներին հենց այդպես էլ թվաց: Բայց հետո զգացվեց տոթը: Բայց այդ տոթն ինձ խեղդեց ոչ թե ֆիզիկապես, այլ հոգեպես: Հարցն այն է, որ տոթն այնքան էլ հեղձուցիչ չէր, որ զգալի նեղություն տար իմ մարմնին: Սակայն դրա փոխարեն նա ճնշում էր իմ հոգին և այն էլ՝ ծանր կերպով: Այդ տոթն ինձ ստիպում էր տանջվել և երազել: Ահա,— սկսեցի մտածել ես,— ահա ես ընկել եմ այս խոր ու անձուկ կիրճը, իսկ այնտեղ, վերևում, որտեղ վերջանում են սարերը և երկինքն է սկսվում, ահա այնտեղ, ամենայն հավանականությամբ, սքանչելի եղանակ է... Այստեղ հորիզոնը նեղ է և փակ, այնտեղ՝ լայն է և արձակ: Այստեղ դու գտնվում ես ամենաներքևում, հատակի վրա, այնտեղ՝ կլինես բարձրում, ամենից վեր: Կանգնիր այնտեղ որևէ ժայռի վրա և մի հայացքով ընդգրկիր բնության այս ամբողջ կերտվածքն իր բազմապիսի սար ու ձորերով, լեռնահարթերով, կածաններով, երևացող հեռու և մոտիկ գյուղերով…

Ահա այդ կերպ ազդեց տոթն ինձ վրա: Նա կարծես խլեց ինձ իր տաք հորձանքով և մի թեթև տաշեղի պես սկսեց բարձրացնել դեպի իր մակերեսը: Ես երևակայությամբ արդեն այնտեղ էի, բարձրում, ուստի և այնքա՛ն տհաճ էր իմ վերադարձը դեպի իրականություն, երբ ոտքս կոպիտ կերպով խփվեց չոր ռելսին և ես տեսա, որ դեռ այդտեղ եմ՝ ձորի հատակում…

Գնա՛, թեքվի՛ր, բարձրացի՛ր… Այժմ զգացի, որ ավելորդ էին նույնիսկ այդ կարճ բառերը: Այժմ, առանց այդ բառերի էլ, ես գիտեի, ես զգում էի, որ հանգստի տունը պետք է լիներ այնտեղ՝ վերևում, ամենից վերևում և ուրիշ ոչ մի տեղ…

Ես թեքվեցի կածանից, անցա ռելսերի մյուս կողմը և այժմ արդեն ինձ զգացի սայլի ճանապարհի վրա: Բարձրանում էր սայլի ճանապարհը լանջն ի վեր, կորչում էր անտառի մեջ, հետո նորից էր հայտնվում, ձգվում էր լանջի լայնքով, ետ էր դառնում մի նոր զուգահեռով, ավելի բարձր, նորից էր թեքվում, նորից էր ետ դառնում: Հայկական լեռնային ճանապարհի սովորական տեսարան: Անսովորը միայն անտառն էր, որի զով շունչը փռվել էր ողջ ձորի վրա:

Երբեմն ճանապարհի եզրերին հանդիպում էին նաև մեծ ծառեր և այն ժամանակ դրանց ստվերն իրենց տակն էր առած լինում ճանապարհի մի մեծ պատառը: Իսկ երբեմն ծառերը ետ էին գնացած լինում ճանապարհի կողքերից և այն ժամանակ արևի կուրացնող պայծառ լույսն ընկած էր լինում ճանապարհի գորշ-սպիտակ փոշու վրա: Երկու կողմերում համատարած փռված էր խիտ անտառն իր կիսալույս զովությամբ: Յուրաքանչյուր ծառ կարծես հրավիրում էր քեզ՝ պառկելու իր ստվերի տակ, շնչելու սաղարթների բույրը և քնելու: Սակայն հարկավոր էր գնալ:

Ես արդեն բավական բարձրացել էի: Ներքևում երևում էին փոքրացած կայարանի մի քանի շենքերն ու համարյա աննկատելի դարձած Դեբեդը, իսկ վերևում դեռ չէր էլ նշմարվում հանգստի տունը: Որտե՞ղ էր թաքնվել…

Ես քայլում էի արագ և յուրաքանչյուր քայլի վրա իմ սիրտը հրճվում էր ձորից ազատագրվելու մեծ բավականությունից: Թվում էր, թե ես ճիգ չէի անում վերև բարձրանալու, այլ մի արտաքին ուժ ձգում էր ինձ այն բարձրից: Եվ երբ, վերջապես, սայլի ճանապարհը վերածվեց կիպարիսներով շարված մի շքեղ ու լայն ծառուղու, ես արդեն ինձ զգում էի հանգստացած ու բավարարված…

2

Հանգստի տան շենքը երևաց հանկարծակի: Եվ միայն երևալուց հետո ես զգացի, որ նա կարող էր երևալ և, հավանորեն, երևում էր նաև ցածրից՝ ձորից, միայն թե վարժ աչք էր հարկավոր այն նկատելու համար: Համենայն դեպս, եթե ոչ ամբողջ շենքը, գոնե դրա կտուրի սուր ծայրը պետք է որ երևար հենց կայարանի մոտից:

Ուրեմն ահա թե ինչ բան է այս հանգստի տունը… Լեռների բարձրավանդակի մենավոր պալատ՝ շրջապատված մրգի ծառերով ու մշտադալար եղևնիներով: Մի գեղեցիկ, երկհարկանի շենք, կառուցված երբևէ, ինչ-որ հարստի կողմից՝ իր և իր ընտանիքի համար…

Ես մոռացել էի, որ պետք էր մոտենալ շենքին: Ես կանգնել և հիանում էի մարդկային ստեղծագործությամբ, որն սքանչացրել և իմաստավորել էր վայրենի բնության այդ անկյունը: Գեղեցիկ էր ներքևում փռված ձորը, գեղեցիկ էր այդ բարձրավանդակը, գեղեցիկ էին ձորի մյուս ափի սարերն ու դրանց գագաթների վրա փռված փոքր ու մեծ հարթությունները, գեղեցիկ էին անտառները, բայց այդ բոլորի մեջ չկար ոչ մի գիտակցական նպատակ, չկար ոչ մի նախագծված օրինաչափություն, ոչ մի միտք… Եվ, ուրեմն, որքան սքանչելի պիտի երևար ինձ այդ մի անկյունը, որտեղ բնության հանճարեղ առեղծվածը՝ մարդը, իր ստեղծագործությունն էր կանգնեցրել: Ապրում ենք քաղաքում կամ գյուղում, որտեղ ամեն ինչ կառուցված է մարդու ձեռքով, և չենք նկատում մեր երջանկությունը: Այնինչ, մենք երջանիկ ենք, որովհետև մարդու ձեռքով ստեղծված ամեն մի իր՝ դա հեքիաթ, դա երազ, դա առասպել է բնության համեմատությամբ:

Ես զարմանում էի նախամարդու զարմանքով…

Ես կանգնել էի ակնապիշ և երևի դեռ երկար կմնայի այդպես, եթե մի կողմնակի միջամտություն չխանգարեր ինձ...

Ո՜վ քաղցր պատահականություն, որ միշտ երևացել ես ինձ աղջկա կերպարանքով… Այդպես երևացիր դու նաև այդ րոպեին: Բայց այդ անգամ, ինչպես ինձ թվացել էր յուրաքանչյուր անգամ, դու ստացել էիր քո ամենագեղեցիկ մարմնավորումը, ամենասքանչելի էացումը… Դու մոտեցար ինձ և հարց տվեցիր.

— Ու՞մ եք ուզում, ընկե՛ր…

Ես քսանվեց տարեկան էի: Ես արդեն լուրջ մարդ էի համարում ինձ: Եվ թվում էր ինձ, որ այժմ ես՝ վաստակավոր համբուրող, անխոցելի եմ աղջկա հրապույրի հանդեպ: Բայց երբ լսեցի՝ «ո՞ւմ եք ուզում, ընկե՛ր» խոսքերը՝ արտասանված քո աղջկային ձայնով, ես հազիվ զսպեցի իմ պատասխանը.

— Քեզ:

Դրա փոխարեն ես ինչ-որ բան թոթովեցի հանգստի տան մասին, բնության մասին, իմ մասին:

— Ձեզ գրասենյակն է հարկավոր,— եզրակացրեց նա,— անցեք այս կողմով:

Ես գնացի: Ես շնչում էի եղևնիների բույրը և կուրծքս ուռչում էր մաքուր ու թարմ օդի առատությունից: Իսկ աչքերիս առջև դեռ փայլատակում էր նրա սպիտակ զգեստը, ես տեսնում էի նրա բաց թևերի ցորնագույնը, ես տեսնում էի նրա մերկ ոտքերը՝ կիսակոշիկների մեջ: Սակայն մի խաղաղ, անկիրք հուզում էր պաշարել ինձ: Վտանգավոր ընդմիջում՝ փոթորկից առաջ… Ես գիտեի, որ երբ դուրս գամ գրասենյակից, տեղավորվեմ, լվացվեմ ու նախաճաշեմ, երբ վերջացնեմ այդ անհրաժեշտ, մահկանացուական գործերը, իմ առաջին հոգսը պիտի լինի՝ հանդիպել նրան…

Բայց եղավ այլ կերպ:

Եղավ այնպես, որ գրասենյակից ես գնացի ուղիղ ննջարան և պառկեցի ինձ հատկացված մահճակալի վրա: Այդ երկրորդ հարկումն էր, և լուսամուտից երևում էին հանգստի տան օժանդակ շենքերը, այգին, ցանկապատը, ցանկապատի ետևում անցնող ճանապարհը և մի փոքրիկ գյուղ՝ մի քանի քայլ հեռվում:

Ես մտածում էի: Ես չէի շտապում հանդիպել աղջկան: Եվ ինչո՞ւ հանդիպել: Նա պարգևեց ինձ այն, ինչ որ հարկավոր էր: Նա ինձ պարգևեց հաճելի դիմավորում, նա գեղեցիկ դարձրեց իմ մուտքը հանգստի տուն:

Ի՜նչ գեղեցիկ է կյանքը, սիրտ իմ սիրելի: Ի՜նչ գեղեցիկ են կիպարիսները՝ ծառուղու վրա, աղջիկը՝ մուտքի մոտ, և՛ այս ամառանոցը, և՛ այս մահճակալը, և՛ այս փափուկ ներքնակը: Ի՞նչ հաճելի են մարդիկ, որ հանդիպում են քեզ, և որոնք բոլորը քեզ ընկերներ են, և որոնց բոլորին դու ընկեր ես: Ինչ լա՜վ է աշխարհը, ինչ լա՜վ են մոտիկ ու հեռու, ծանոթ և անծանոթ բոլոր վայրերը…

Այ, դու դեռ չես եղել, ասենք, Արխանգելսկում: Բայց գնա այնտեղ, երբ որ կուզենաս, և քեզ կհանդիպեն սիրելի մարդիկ, սիրելի դեմքեր: Մերոնք, հասկանո՞ւմ ես ինձ, մերոնք կհանդիպեն… Ի՜նչ լավ է այդ «մերոնք»-ը... Եվ այնպես կթվա քեզ, որ այն՝ քո տունն է, ուր դու վերադարձել ես, և այն՝ ձերոնք են, որ քեզ հանդիպում են, և այն ամեն ինչը և այն բոլոր մարդիկ քեզ ծանոթ են ծնված օրվանից և ծնված օրվանից էլ՝ քեզ սիրելի…

Ոչ, ես այն չեմ ասում, ինչ որ ցանկանում եմ: Գուցե քո՞ւնս է տանում այս հաճելի հանգստի պատճառով: Կամ գուցե իմ այս մտքերը դեռ չունեն արտահայտության ոչ մի ձև, որովհետև դեռ չեն արտասանվել ոչ մեկի շրթունքներով, որովհետև դեռ դուրս չեն թռել ոչ մեկի կրծքից: Ինչպե՞ս ասել…

Ասենք՝ այսպես: Մի տուրիստ է գալիս Եվրոպայից այստեղ: Պարզապես՝ տուրիստ: Ի՞նչ իրավունքներ պիտի ունենա նա կամ ի՞նչ պարտականություններ. զուտ տուրիստական: Պիտի նայի, զննի, ծանոթանա և վերադառնա՝ ահա նրա իրավունքը: Պիտի ենթարկվի մեր օրենքներին՝ ահա նրա պարտականությունը…

Իսկ ես Արխանգելսկ կգնամ ձայնս գլուխս գցած, սրան նախատելով՝ հասարակական գույքը փչացնելու համար, նրան գովելով՝ իր արտասանած լավ բանաստեղծության համար, երրորդի հետ շախմատ կխաղամ, թերթում հոդված կգրեմ կայարանապետի բյուրոկրատ վերաբերմունքի մասին, քաղկոմից հանձնարարություն կստանամ՝ գնալ ձկնաբուծարան, ուսումնասիրել արտադրությունը և փոխել ինչ-որ փոքրիկ ցեխում եղած անմխիթար վիճակը, միլիցիոներից նկատողություն կստանամ փողոցի մեջտեղով քայլելու համար, մի աղջկա հետ կինո կգնամ, շաբաթօրյակի ժամանակ քարեր կհավաքեմ…

Այսպես ամեն մարդ գնում է իր տունը…

Ինչո՞ւ եմ մտածում այս մասին ամառանոցում: Գուցե նրա՞ համար, որ այս էլ իմ տունն է, ուր ես եկել եմ հանգստանալու: Գուցե նրա՞ համար, որ այստեղ էլ կան ծանոթ մարդիկ, և նրանք բոլորը մերոնք են՝ յուրայիններ…

Չգիտեմ…

Լուսամուտից ներս է փչում լեռնային հովը: Մի անուշ թմրություն պաշարել է ինձ: Խուլ, շատ խուլ, լսվում է շչակի ձայնը այնտեղից՝ ներքևից: Գնացք է անցնում… Որքա՜ն հաճելի է, որ այստեղից, ամայի այս սարի վրայից, այս փոքրիկ շենքը պողպատե ամուր գծերով կապված է մեր ամբողջ երկրի հետ, մեր ողջ աշխարհի հետ…

Սուրում են գնացքները…

3

Մի ձեռք կամացուկ շոշափեց ինձ: Բաց արի աչքերս: Նա էր՝ այն աղջիկը:

— Դուք չե՞ք նախաճաշել:

Ես վճռեցի շփոթեցնել նրան.

— Դուք հերթապա՞հ եք:

— Ոչ:

— Ուրե՞մն:

Նա զգաց, որ բռնվել է, բայց հպարտ պատասխանեց.

— Հենց այնպես, ընկերաբար: Եթե չարթնացնեի՝ սոված պիտի մնայիք: Իսկ դուք դեռ շնորհակալություն էլ չեք հայտնում…

Այս անգամ արդեն ես էի բռնվել: Վեր կացա և միասին գնացինք դեպի ճաշասենյակ: Ճանապարհին նա հարցրեց ինձ.

— Ինչո՞ւ եք ուշ եկել: Արդեն ամսի 15-ն է: Այստեղ բոլոր գտնվողներս եկել ենք ամսի սկզբից:

Եվ, չսպասելով պատասխանի, շարունակեց.

— Երևի ամսի վերջին մեզ հետ միասին թողնելո՞ւ եք հանգստի տունը:

— Ոչ, ես պետք է մնամ ուղիղ մի ամիս:

— Մինչև մյուս ամսի կե՞սը:

— Այո:

Նա ծռմռեց շրթունքները:

— Դուք, ընկե՛ր, ձեր ժամանելով բոլորովին խախտում եք հանգստի տան կանոնները: Այստեղ բոլորն են լինում մի ամսով, բայց միշտ գալիս են ամսի սկզբին և վերադառնում վերջին: Ահա, տեսե՛ք,— ասաց նա և ծիծաղելով ցույց տվեց պատի վրա մատիտով գրած մի քանի բառ:

«Ո՛վ այցելուներ, լսեցեք իմ իմաստությունը՝ եկեք ամսի 1-ին և վերադարձեք՝ 30-ին»:

— Ի՛նչ իմաստուն մարդ է եղել այդ գրողը,— ժպտացի ես:— Եվ անծիվածը ոչ մի բացառություն չի սահմանել, որով արդարացվեր իմ ուշացած ժամանումը: Մինչդեռ, ես զբաղված էի այնքա՛ն կարևոր գործերով…

Մենք ծիծաղելով մտանք ճաշասենյակ:

Եվ այնտեղ ես առաջին անգամ ծանոթացա նրանց հետ, ովքեր պետք է կազմեին իմ միջավայրը մի ամբողջ ամիս: Այսինքն՝ ոչ թե մի ամիս, այլ երկու շաբաթ:

Նստած էին նրանք սեղանների շուրջը և նախաճաշում էին: Քառասունից հիսուն հոգի: Բոլորն էլ ծանոթ կերպարանքներ, գլխավորապես՝ բանվոր ու գյուղացի երիտասարդներ: Նրանցից ոչ մեկին ես անձամբ չէի ճանաչում, սակայն նրանք սիրելի էին ինձ հին մտերիմների պես:

Ես նստեցի և աղջիկն էլ՝ իմ կողքին:

Որքա՛ն հարազատ են ինձ նրանք բոլորը, մի տեսեք: Մտերմության շունչը մթնոլորտի պես տարածվել է ողջ ճաշասենյակում: Որքա՛ն յուրային են նրանք: Մի՞թե առաջին անգամն է, որ տեսնում եմ ես նրանց: Դե ախր նրանք մենք ենք ու մերոնք: Ոչ մի ձևականություն, ոչ մի անծանոթավարիություն: Ախր մեր ընտանիքն է սա…

Ես հոգեպես ուրախ էի, որ մի ավելորդ անգամ, այդքան փայլուն կերպով, ապացուցվում էր իմ արխանգելսկյան թեորիայի ճշմարտությունը: Ես կարիք չունեի այդ ապացույցին, ես առանց այդ էլ համոզված էի դրանում, սակայն և այնպես ուրախանում էի, հոգեպես հրճվում:

Բայց հանկարծ, կարծես քնից սթափված, ես զարմանքով նայեցի շուրջս: Մի անակնկալ հանկարծակիի բերեց ինձ: Ես նկատեցի, որ նրանք՝ ճաշասենյակում գտնվող բոլորը, բացի ինձանից, ոչ միայն մտերիմ էին միմյանց հետ, այլև մի ուրիշ կերպ, որն առաջին հայացքից դժվար էր բնորոշել: Իհարկե, իմ արխանգելսկյան թեորիան դրանից չէր ժխտվում, սակայն ես զգացի, որ նա անկարող էր ամբողջովին բացատրել այդ երևույթը: Եվ իսկապես, ի՞նչն էր պատճառը, որ թեև մենք բոլորս մտերիմ էինք միմյանց, բայց նրանք բոլորը, բացի ինձանից, ինչ-որ մի այլ կերպ էին իրար հետ:

Ի՞նչ բան էր դա…

Դա այն էր, որ նրանք բոլորը որոշ փոխհարաբերության մեջ էին իրար հետ: Եվ դա գլխավորն էր...

Նրանցից մեկը, որ նստած էր իմ դեմ, ուրախ մի ուսանող էր, որն իր յուրաքանչյուր շարժումով կամ խոսքով ծիծաղ էր պատճառում բոլորին: Ըստ երևույթին, նա հանգստի տան կոմիկն էր՝ սիրված զվարճախոսը: Երկար սեղանների վրայով նա նայում էր հեռու և գլխի ակնարկով հասկացնում էր ինչ-որ մի ուրիշին, որ իր կակաոն նա խմում է նրա կենացը: Այդ մի ուրիշը մեքենավար բանվոր էր՝ երեսունհինգ տարեկան, բայց պատանու պես աշխույժ: Հետագայում ես տեսա, որ նա ուսանողի զվարճախոսության մշտական ընկերն էր և նրա կատակների սովորական ենթական: Նրանք շարունակ միմյանց հետ էին լինում, իսկ նրանց շուրջը շարունակ հավաքված էին լինում շատ ուրիշները, որովհետև բոլորը գիտեին, որ ամեն րոպե նրանք մի նոր բան պիտի հնարեին, մի նոր խաղ պիտի խաղան:

Իմ կողքից երրորդը մի երիտասարդ էր՝ վեր քշտած թևերով ու դուրս ընկած կլթակով: Նայելով նրա կոկորդին, կարելի էր ենթադրել, որ նա լավ ձայն ունի: Եվ իրոք, նա երգիչ էր՝ հանգստի տան երգիչը: Իսկ մի քիչ հեռվում նախաճաշում էր մի այլ երիտասարդ, այս անգամ՝ իսկական աժդահա, որն իր գոտուց կախել էր մի մանդոլին: Նա գիտեր լավ նվագել, բայց տանը քիչ էր զբաղվում դրանով: Իսկ այդտեղ նա ստիպված էր շարունակ իր հետ կրել նվագարանը, որովհետև հաճախ էր հարկ լինում նվագել: Այժմ մանդոլինը հանգիստ կախ էր ընկել նրա աժդահա մարմնից, ինչպես ճանապարհորդական մի փոքրիկ դանակ:

Նրա դիմաց նստել էր սիրահարված մի զույգ: Նրանք միասին էին լինում գիշեր ու ցերեկ, բացի, իհարկե, քնելու ժամերից: Հանգստացողները լուռ սիրում էին նրանց՝ աշխատելով չխանգարել նրանց իրենց ներկայությամբ: Երբ նրանք գնում էին անտառ՝ զբոսնելու և հետո նստում էին այնտեղ՝ հանգստանալու, բոլորը լուռ համաձայնությամբ հեռանում էին նրանց շրջապատից այնպիսի տրամագծով, որն ապահովեր սիրո շշուկի անլսելիությունը: Կարծես ի շնորհակալություն դրան, այն երեկոներին, երբ հանգստացողները կազմակերպում էին փոքրիկ երեկույթներ, սիրահարվածները նրանց համար արտասանում էին կուպլետներ, որոնք ասվում էին փոխնեփոխ և ունեին շատ զվարթ բովանդակություն: Նրանք միշտ նույն կուպլետներն էին արտասանում, երևի ուրիշը չգիտեին, բայց միշտ էլ ստանում էին ջերմ ծափահարություններ:

Կար նաև մի ծերունի, որն այդ բոլոր երիտասարդների մեջ ընկած, աշխատում էր հարմարվել նրանց: Փորձում էր աթուրմա խաղալ, թեև շատ անհաջող: Եվ որպեսզի նրա սիրտը չկոտրեն, խաղացողներն իբրև թե չէին նկատում, որ նա խախտում է օրենքները, իսկ կռացած տղան միշտ ավելի էր ցածրացնում իր մեջքը, որ նա հեշտ ցատկի:

Կար նաև մի ուրիշ ծերունի: Նա ինչ-որ գործարանի պահակ էր: Նա պահակ էր եղել իր ամբողջ կյանքում: Իսկ այժմ, գալով հանգստի տուն, հենց առաջին գիշերվանից նա սկսել էր պահակ կանգնել: Որքան համոզել էին, բացատրել, որ նա եկել է հանգստանալու, որ նրանք պահակի կարիք չեն զգում և ունեն իրենց սեփական պահակը, ոչ մի օգուտ չէր տվել: Ճարահատված, հանգստի տան վարիչը նրա նկատմամբ թույլ էր տվել ռեժիմի խախտում: Եվ այժմ, ամեն երեկո, երբ բոլոր հանգստացողները ժամը 11-ին պառկում էին քնելու, այդ ծերունին լցնում էր իր չիբուխը, նստում էր հանգստի տան պահակի մոտ և զրուցում: Երբ դառնում էր գիշերվա երկուսը, նա վեր էր կենում, հորանջում և գնում էր քնելու:

— Լավ ուշք դարձրու,— ասում էր նա ճանապարհի կեսից։— Գյուղը մոտիկ է: Կարող է մեկնումեկը գալ այնտեղից ու մի գիշերում քաղել այգու ամբողջ տանձն ու խնձորը…

Նա շատ պատմություններ գիտեր: Ունեցել էր հետաքրքիր կյանք և յուրաքանչյուր առիթով պատմում էր այդ մասին: Երբ ժամը 11-ից հետո ննջարաններից մի քանիսում մի քանի մահճակալներ դեռ դատարկ էին մնում, հերթապահը գնում էր դուրս, ուղիղ դեպի պահակները, և առանց սխալվելու գտնում էր երիտասարդ տղաներին ու աղջիկներին, որոնք ծերունու շուրջը հավաքված, լսում էին նրա քաջագործությունների պատմությունները:

Կային երեք աղջիկներ, որ բոլոր հանգստացողներից ավելի սիրում էին լողանալ: Նրանք ժամերով դուրս չէին գալիս այն գեղեցիկ, քանդակազարդ ավազանից, որը գտնվում էր հանգստի տան ետևում, մի փոքրիկ բարձրության վրա, սաղարթախիտ ծառերի կանաչ ծածկոցի տակ:

Մոտենում էին տղաներն ավազանին և խնդրում էին նրանց՝ դուրս գալ, մի քիչ էլ թողնել իրենց լողանալու, բայց իզուր: Պատասխանը լինում էր ջրի չրմփոցը և զվարթ ծիծաղը: Տղաներն սպառնում էին հանվել: Դա լուրջ սպառնալիք էր, որովհետև նրանցից ոչ մեկը

լողազգեստ չուներ և ուրեմն բոլորովին պիտի մերկանար: Այդ սպառնալիքից հետո աղջիկները փոխում էին իրենց տակտիկան՝ այժմ արդեն խնդրելով, որ թույլ տան իրենց մի քիչ էլ լողանալ: Զանազան անուշ խոսքեր էին ասում, դիմում էին «ջան» բառով և զինաթափ էին անում: Ընդհանրապես, տղաները նրանց չէին սիրում և օձաձուկ էին անվանում:

Եվ այսպես, բոլոր հանգստացողները, բացի ինձանից, որոշ փոխհարաբերության, որոշ կապակցության մեջ էին միմյանց հետ: Ես նկատեցի այդ և իսկույն էլ նկատեցի, որ ահա այդ էր կարևորը և ոչ թե սոսկ մտերմության զգացումը: Նկատեցի, որ մտերմությունը բխում է հենց այդ փոխհարաբերություններից, որ դա ինքն իրեն չի ստեղծվել, չի կարող ստեղծվել այնպիսի մարդկանց միջև, որոնք ոչ մի կապ չունեն իրար հետ:

Բոլոր այստեղ գտնվողներն ունեն իրենց տեղն այս փոքրիկ հասարակության մեջ: Իսկ ո՞վ եմ ես: Ո՞րն է իմ տեղը նրանց մեջ: Ինչի՞ վրա է հենված իմ մտերիմ վերաբերմունքը դեպի նրանք և ի՞նչ հիման վրա ես նույնպիսի վերաբերմունք պիտի ակնկալեմ նրանցից... Ես յուրային և հարազատ եմ առայժմ միայն ներքնապես, բայց ներքնապեսը բավական չէ: Ես պետք է ունենամ այստեղ իմ տեղը: Իհարկե, ես ազատ ընտրություն կատարել չեմ կարող իմ տեղի նկատմամբ, քանի որ դա կախված է ոչ միայն ինձանից, այլև նրանցից՝ այդ հանգստացողներից...

Ի դեպ՝ այդ հանգստացողները: Նախքան այստեղ գալս ես նրանց պատկերացնում էի որպես միանման մարդկանց, ավելի ճիշտ՝ դիմազուրկ կատեգորիաների հավաքածու. աղջիկ, տղա, կին, ծերունի, բանվոր, գյուղացի, ուսուցիչ և այլն: Իմ պատկերացումների մեջ, բնականաբար, դեռ չկային անձնավորություններ՝ անուն-ազգանուններով, միայն իրենց հատուկ և անկրկնելի դիմագծերով, բնավորություններով...

Իսկ այժմ, նրանց տեսնելուս հենց առաջին պահից, դիմազուրկ կատեգորիաները ցնդեցին իմ աչքի առաջ, ավելի ճիշտ՝ ոչ թե ցնդեցին, այլ առան շունչ ու մարմին: Այժմ ես տեսնում էի ոչ թե, օրինակ, ընդհանրապես աղջիկների, այլ այսինչ աղջկան, այնինչ աղջկան: Ոչ թե ընդհանրապես ծերունիների, այլ պահակ ծերունուն, հանգստացող ծերունուն և այլն...

Եվ այսպես, ես պետք է գտնեմ իմ տեղը: Իմ տե՞ղը... Դա ոչ մահճակալն է, ոչ աթոռը՝ ճաշասենյակում և ոչ էլ ռեժիմը, որին ես պետք է ենթարկվեմ՝ մյուսներին հավասար: Եթե այդքանով սահմանափակվեր իմ տեղը և բոլորի տեղը, հանգստի տունը կվերածվեր ստանդարտ կերպարանքների տուփի, կյանքն այնտեղ կդառնար մեխանիկական...

Ես դեռ չգիտեմ, թե ով է պակասում նրանց, բայց ես ավելորդ չեմ: Ինձ համար էլ, իհարկե, տեղ կա սահմանված: Կոմի՞կ՝ նրանք ունեն: Տրագի՞կ՝ հարմար չեմ: Սիրահարվա՞ծ՝ կարելի է փորձել: Կամ գուցե փիլիսոփա՞...

Ոչ, ավելի լավ է՝ չմտածեմ, քանի որ իմ ազատ կամքով չեմ ընտրելու իմ տեղը: Իմ տեղն ինձ ցույց կտան նրանք...

4

Ես շատ եմ ունկնդրել մարդկանց սրտերին և շատ եմ լսել դրանց բազմազան մեղեդիները: Ես գիտեմ, թե որքան հույս ու ոգևորություն է թպրտում յուրաքանչյուր արնոտ մսակտորի մեջ, որը սիրտ է կոչվում: Ես հետևել եմ, թե ինչպես յուրաքանչյուր զգացմունք հետագայում դուրս է հորդում սրտից և դառնում է գործ...

Մութ էր արդեն, երբ ես գնացի հանգստի տան պտղատու այգին՝ զբոսնելու: Այնտեղ, ծառերի միջև, դեպի ձորը կախված մի ժայռի վրա, գտնվում էր տախտակյա կլոր մի զրուցարան՝ ոճավորված գեղեցիկ գմբեթով ու սյունակներով: Այնտեղ ոչ ոք չկար: Ես ներս մտա և նստեցի մի աթոռի վրա:

Ներքևում, շատ ներքևում, մթության մեջ, խշշում էր Դեբեդը, հազիվ նկատվում էին կայարանի մանրիկ կրակներն այն ահագին ցածրում: Վերևում, իմ աջակողմում, նորից նույն տեսարանն էր՝ խավարը և մանրիկ կրակները: Հանգստի տունն առայժմ էլեկտրականություն չունի, և ես այդ բանը նկատեցի միայն երեկոյան դեմ, երբ խավարի մեջ մշուշվեցին մարդիկ ու առարկաները:

Հանգստի տունն առայժմ էլեկտրականություն չունի... Ամենից հետաքրքիրն այստեղ «առայժմ» բառն է: Հանգստի տան վարիչն այդ բառն արտասանեց այնպես, կարծես մահավճիռ էր կարդում խավարի թագավորությանը: Առայժմ... Այո, առայժմ: Հանգստի տունն առայժմ շատ բան չունի: Բայց այդ բոլորը՝ միայն առայժմ...

Թփերը խշխշացին: Մոտեցավ մի բարձրահասակ, արծվաքիթ երիտասարդ՝ սև ու խիտ հոնքերով: Վարիչն էր:

— Ո՞վ կա այստեղ: Նորե՞կը: Բարի երեկո:

— Բարի երեկո: Նստի՛ր: Ես հենց նոր մտածում էի քո մասին: Ուրեմն, ասում ես՝ առայժմ, հա՞...

— Ի՞նչը: Հա, իհարկե, առայժմ... Ժամանակ չի լինում, որ նստենք, մի քիչ խոսենք: Ամբողջ օրն զբաղված էի կովերի գործով: Կով պիտի պահենք հանգստի տան համար...

Նրա ձայնը մի վայրկյան լռեց խավարում, ապա լսվեց նորից.

— Կով ասացի, ուրիշ բան հիշեցի: Այս շենքը, որտեղ հիմա հանգստի տունն է, առաջ սովխոզի գոմ էր... Կովեր էին պահում: Անվնաս գործ: Նույնիսկ օգտակար: Բայց մի օր ես ինչ-որ գործով եկա այստեղ... Այն ժամանակ ես աշխատում էի կաշեգործարանում: Բանվոր էի: Երբ տեսա, թե ինչպես այս հիանալի ամառանոցը ծառայում է ոչ իր նպատակին, ուղղակի վրդովվեցի: Ու վճռեցի մտքումս, որ այստեղ պետք է հանգստի տուն կազմակերպել...

Նա խոսում էր ծանր հևոցով: Հին կաշեգործարանի հետամնաց, համքարային պայմաններում կատարած երկար տարիների աշխատանքը խոր հետք էր թողել նրա թոքերում: Ես հարցրի նրան այդ մասին:

— Ոչինչ,— պատասխանեց նա,— այդ էլ գտավ իր վերջը: Հիմի մեր գործարանում նոր սարքավորում են ստացել, այլևս վերացել է հին ձևի վնասակար աշխատանքը: Հա, ի՞նչ էի ասում: Ուրեմն, որոշելով, որ հանգստի տուն պիտի կազմակերպել, ես վերադարձա քաղաք: Ու սկսվեց վազվզոց՝ քաղկոմից քաղխորհուրդ, այնտեղից՝ Ժողկոմխորհ, հետո՝ սոցապ, արհմիություններ... Մեկ՝ ինձ չէին ազատում գործարանի աշխատանքից, մեկ՝ սովխոզի վարչությունը հրաժարվում էր կովերին տեղափոխել ուրիշ տեղ, մեկ՝ փող չկար: Բայց ես վերջ ի վերջո հասա իմ նպատակին: Իսկ հետո խնդրեցի, որ ինձ վարիչ նշանակեն՝ մինչև գործերն այստեղ կարգի բերեմ: Նշանակեցին: Եկա այստեղ և ի՞նչ տեսնեմ: Ավազանը՝ ցամաքած, պտղատու ծառերը՝ անխնամ, շենքերը՝ վերանորոգման կարոտ, ամեն ինչ՝ կեղտոտ: Բայց...

«Առայժմ» բառից հետո բնորոշ էր նրա «բայցը»: Նա այդ բառով էր ամփոփում իր դժվար աշխատանքը, որ թափել էր՝ նպատակին հասնելու համար: Նա այդ բառով էր միացնում ժամանակի երկու ծայրերն իրար: Չկար, բայց եղավ: Չունեինք, բայց ունենք: Առայժմ չենք արել, բայց կանենք... Իսկ որքա՛ն ճիգ ու ջանք էր ընկած այդ երկու բառերի՝ «առայժմ»-ի և «բայց»-ի միջև...

Մեր գլխավերևում, զրուցարանի տախտակե առաստաղի մեջ, խուլ ղժժում էին մեղուները: Ամբողջ ցերեկը նրանք սնվել էին Լոռվա սքանչելի ծաղիկներով և այժմ կարծես նստել էին հաշվեհարդարի:

Վարիչը, անշուշտ նույնպես ունկնդրելով դժժոցին, ասաց.

— Մեղր կա: Պիտի քանդեմ տախտակները: Ա՛յ թե մայր մեղվին կբռնեմ... Առանց փող ծախսելու հանգստի տանը կից մեղվանոց կկազմակերպեմ: Ա՛յ, սպասիր, կտեսնես...

Մեր շուրջը՝ մոտիկ և հեռու, լսվում էին խավարում կորած մարդկանց երգի և խոսակցության ձայները: Շրջում էին հանգստացողները՝ թևանցուկ զույգերով կամ խմբովին, արդեն վարժված շրջակա մթությանը: Մի քանի տղաներ և աղջիկներ ուրախ կանչերով իջան ներքև, դեպի կայարան՝ երեկոյան գնացքը դիմավորելու համար: Մի քանի րոպե հետո նրանց ձայները խլացան ցածրում:

— Դինամո-մեքենան արդեն գնել ենք: Լենինգրադում: Շուտով կստանանք: Լույս կունենանք, է՛յ... Լոռվա ձորը կպայծառացնենք: Հինգ հարյուր մոմից պակաս ոչ մի լամպ չպիտի կախեմ դրսում, թող լույսով կշտանան հանգստացողները... Բոլոր ծառուղիներում լույսեր պիտի կախեմ, ազնիվ խոսք...

— Բոլո՞ր ծառուղիներում...

— Գիտեմ ինչ ես ասում,— ծիծաղեց նա,— սիրահարվածների ճամփան մի քիչ կերկարի, բայց ոչ այնքան,— անտառը մոտիկ է:

Ես նույնպես ծիծաղեցի: Հետո նորից նա ծիծաղեց և դրանից հետո՝ նորից ես: Փոքր բան էր, իհարկե, ծիծաղի առիթը, բայց այնքան հաճելի էր այդ ծիծաղը: Նա մեզ մտերմացնում էր միմյանց:

— Գյուղին էլ կարող ենք լույս տալ: Շատ չէ, բայց չորս-հինգ հազար մոմ: Դա կանի հարյուր լամպ: Առայժմ բավական է նրանց: Ախր նրանք էլ կաթ են տալիս մեզ՝ մինչև մեր կովերի ստացվելը: Բանվորական ուժն էլ են տալու նրանք: Գիտե՞ս ինչքան բանվոր է մեզ հարկավոր: Այստեղ, որտեղ հիմի նստած ենք ես ու դու, պիտի լինի մեր ճաշարանի շենքը... Երկու հարյուր հոգու համար:

— Երկո՞ւ հարյուր...

Նա հնաց և պատասխանեց.

— Այո: Երկու հարյուր: Առայժմ հիսուն մարդ է հանգստանում, բայց շուտով պիտի լինի երկու հարյուր: Պատկերացնո՞ւմ ես՝ ճաշարանի շենքն ուղղակի ժայռի վրա, իսկ լուսամուտները պիտի նայեն դեպի ձորը:

Ես պատկերացրի: Լավ ես մտածել, իմ սիրելի ընկեր, իմ ոգևորված եղբայր: Ճաշարան՝ լուսամուտներով դեպի ձորը: Այդ հիանալի է: Եվ դա միայն մեկն է քո բազմաթիվ նախագծումներից: Հետաքրքիր է, եթե եկող տարի ես նորից այցելեմ այստեղ, ինչեր պիտի տեսնեմ, որ առայժմ չկան, բայց պիտի լինեն...

— Ամոթ է ասելը,— շարունակեց նա,— բայց մեր հանգստի տունն առայժմ բժիշկ նույնիսկ չունի: Դա խայտառակություն է: Ունեինք մեկին, բայց կրճատեցինք: Շարունակ գանգատվում էր մենակության ձանձրույթից և գլխացավի համար լուծողական էր տալիս: Բայց կունենանք և՛ բժիշկ, և՛ մարմնամարզության հրահանգիչ...

Ես ունկնդրում էի նրան և նրա խոսքերի միջից լսում էի հաղթանակող մարդկության երգը: Ուղղակի սլանում ես նրա մտքերի ընթացքով, ուղղակի ծարավում ես, որ մի շենք էլ կառուցվի այս շենքի կողքին, մի ծառուղի էլ բացվի այս ծառուղու կողքին, աճի մարդու գրոհը բնության վրա, ընդարձակվի նրա տիրապետությունը, հանգստի տունն ստանա իր երկրորդ ավտոն, փոքրիկ գյուղը ողողվի էլեկտրական լույսով, նվագախումբ լինի, գա շատ ժողովուրդ, և ներքևից, ձորից, անցնող գնացքի միջից մարդիկ նկատեն, որ այստեղ՝ վերևում, լիաթոք տրոփում է կյանքը...

5

Ես գտա իմ տեղը: Բայց գտա ոչ այնպես, ինչպես գիրքն է գտնում իր տեղը՝ գրադարանի որևէ դարակում: Իմ տե՞ղը: Ես ինքս էլ չեմ կարող որոշել, թե որտեղ էր այն: Սկզբում թվում էր, թե ես պիտի դառնամ որևէ տիպ: Ասենք՝ փիլիսոփա կամ սիրահար: Բայց հետո նկատեցի, որ այդպիսի բան տեղի չունեցավ: Այդպիսի բան տեղի չէր ունեցել նաև մյուսների մեծամասնության հետ: Նրանց մեջ գուցե միայն կոմիկ ուսանողն ու մեքենավար բանվորն էին տիպերը՝ երկու ծերունիների և երեք աղջիկների հետ միասին: Իսկ մնացյալները տիպեր չէին: Եվ ես նկատեցի, որ իր առանձին տեղն ունենալու համար բոլորովին էլ կարևոր չէր՝ լինել որևէ տիպ: Առանց դրա էլ յուրաքանչյուր հանգստացող ուներ իր ամուր և մի տեսակ՝ անփոխարինելի տեղը:

Նույն բանը տեղի ունեցավ նաև ինձ հետ: Ես տիպ չդարձա: Մի քիչ փիլիսոփա էի, մի քիչ սիրահար, մի քիչ ագիտատոր էի, մի քիչ բժիշկ, այսինքն՝ մարդ էի սովորական մարդկանց նման: Ճաշերից առաջ շախմատ էի խաղում: Մեռյալ ժամից հետո խաղում էի աթուրմա: Ավելի ուշ՝ փիլիսոփայում էի հանգստի տան վարիչի մոտ, երազում էի նրա հետ: Իսկ ավելի ուշ՝ շրջում էի անտառով և համբուրում էի իմ սպիտակազգեստ ընկերուհուն: Խավարի մեջ ես չէի նշմարում նրա կերպարանքը, բայց թևանցուկ քայլելիս զգում էի նրա թևի ջերմությունը:

Իսկ առավոտները ես նորից գնում էի հանդիպելու հանգստի տան վարիչին, որը լինում էր օժանդակ շենքերից որևէ մեկում: Մենք մտնում էինք այգի, խնձոր քաղում, փոքրիկ բանջարանոցում լցնում էինք կարտոֆիլի բուկը կամ հյուսում էինք ճյուղերով սարքված ցանկապատի որևէ պատռվածքը: Պատահում էր նաև, որ հավաքում էինք հանգստացողներին և գնում էինք անտառի հեռուն՝ սունկ կամ մորի քաղելու: Երբեմն նստում էինք հանգստի տան բեռնատար ավտոն, գնում դիտելու Լոռվա հնությունները, որոնք թաքնված էին ո՛ր լեռան հետևում, ո՛ր ձորի լանջին, անտառի ո՛ր տեղում...

Եվ մեր ախորժակը բաց էր հիանալի կերպով և մենք ուտում էինք գայլերի պես: Երեք օրը մի անգամ մենք կանգնում էինք կշեռքի վրա և հաճույքով նկատում, որ մեր մարմնի ընդհանուր քաշի վրա ավելացել է ևս կես կիլո բնությունից և անտառներից, լեռներից ու լեռնային արևից, կարտոֆիլի բուկը լցնելուց ու համբույրներից: Եվ մենք կարծես մոռացել էինք, որ ընդամենը մի քանի օր առաջ ուրիշ միջավայրում էինք, ուրիշ հոգսերով և գործերով ծանրաբեռնված: Մեզ թվում էր, թե մենք շատ վաղուց ենք այդտեղ, այդ մարդկանց մեջ, այդ մարդկանց հետ: Երբեմն միայն, երբ արեգակն իջնում էր սարերից այն կողմ, մենք նայում էինք նրան և նրա հետ միասին հայացքով գլորվում սարերից այն կողմ, որտեղ պայքարով ու աշխատանքով լցված մի ամբողջ աշխարհ սպասում էր մեզ: Ու քանի իջնում էր նրա սկավառակը, ու քանի նվազում էր նրա պայծառությունը, այնքան ավելի մեզ թվում էր, թե ահա, ուշ մնացած մի ճառագայթ պիտի գրկի մեզ, փաթաթվի մեր մեջքին և տանի մեզ իր հետ դեպի այնտեղ, դեպի սարերի լուսավոր ետևը...

Մենք սթափվում էինք, ծիծաղում, ցրվում, և ես գնում էի աթուրմա խաղալու, հետո հանդիպելու հանգստի տան վարիչին, իսկ հետո գտնելու իմ ծանոթուհուն:

Երբեմն այգու նստարաններից մեկի վրա ինձ հանդիպում էր հասակավոր մի կին, մի բանվորուհի, որ նստած նայում էր անթարթ հայացքով: Նա էլ էր երազում: Կամ հանկարծ ննջասենյակից դուրս էր պրծնում հանգստացող դերասանը և խավարի միջից որսալով մեզ, հայտնում էր, որ այդ երեկո երեկույթ է լինելու: Նա հայտնում էր այնպես, իբր թե այդ արդեն որոշված է բոլորի կողմից և միայն տվյալ մարդն է, որ տեղեկություն չունի: Եվ առաջարկում էր մասնակցել երեկույթին: Մեկը համաձայնում էր, մյուսը խուսափում: Ես, սովորաբար, հաճույքով հանձն էի առնում երգել մի երկու երգ: Այդ լուրջ սպառնալիքից զգալիորեն գունատված, դերասանն աշխատում էր իսկույն հեռանալ և թողնել ինձ մենակ: Նայելով նրա ետևից, ես ի նշան իմ լիակատար պատրաստակամության, մաքրում էի կոկորդս և սկսում մի մեղեդի, որից կաթվածահար էին լինում ոչ միայն հանցանք չունեցող ծտերը:

Քիչ հետո մարդիկ լցվում էին դահլիճ, որը գտնվում էր օժանդակ շենքերից մեկում: Գլխավոր շենքից համարյա բոլոր նավթի լամպերը տանում էին այնտեղ և դահլիճը դառնում էր բավական լուսավոր: Ես սիրում էի դիտել հեռվից, թե ինչպես խավարի միջով դեպի դահլիճ էին գնում մարդիկ՝ նավթի լամպերը ձեռքերին բռնած: Փայլփլում, շարժվում էին աղոտ կրակները և յուրաքանչյուր կրակի ներս տանելուց հետո մի քիչ ավելի լուսեղ էին դառնում դահլիճի լուսամուտները: Հետո ես վեր էի կենում խոտերի վրայից, թևանցուկ էի անում իմ սպիտակազգեստ ընկերուհուն, և մենք նույնպես գնում էինք այնտեղ: Մուտքի մոտ մենք թողնում էինք թևանցուկը և ներս էինք մտնում ոչ միասին: Իր ութ տարեկան երեխայի հետ նստած ջահել մի կին կամ լողանալ սիրող «օձաձկներից» մեկը նայում էր իմ ընկերուհու շրթունքներին, ապա նայում էր ինձ և քրքջում: Իսկ հետո սկսվում էր երեկույթը:

Եվ այսպես, ես ապրում էի, ես հանգստանում էի, ես ունեի իմ տեղն այդ փոքրիկ հասարակության մեջ, թեև դա շատ սովորական տեղ էր և առանձնապես ոչինչ չէր ներկայացնում իրենից: Բայց այդպես էին նաև մնացած մեծամասնության տեղերը: Ոչ ոք ավելորդ չէր և բոլորս անհրաժեշտ էինք այնքան, որ երբ մեզանից մեկը երկար բացակայում էր, մյուսներն անպայման հարցնում էին միմյանց.

— Որտե՞ղ է այսինչը, ինչո՞ւ չի երևում այնինչը...

Ովքե՞ր էին հարցնում... Եթե ոչ բոլորը, ապա նրանց մի մասը, որ կատակներ էր ուզում, կամ մի այլ մասը, որ նվագ էր ուզում, կամ վարիչը, որ ցանկանում էր իր մտքերը զեղել և որևէ մեկին հաղորդակից անել իր վաղվա ծրագրերին, կամ շախմատիստը, որին խաղընկեր էր պետք և կամ իմ ընկերուհին, որը համբույրներ էր բաղձում:

6

Մի առավոտ, նախաճաշի ժամանակ, սիրահարված զույգը չերևաց: Մենք զարմացանք, որովհետև նրանք, որքան էլ որ սիրահարված, այնուամենայնիվ, երբեք չէին ուշանում ուտելուց: Իսկ երբ նրանք մինչև ճաշ ևս չերևացին և չերևացին նույնիսկ ճաշի ժամանակ, մենք նրանց մասին հարցրինք վարիչին:

— Ախր նրանք գնացին,— հայտնեց նա ժպտալով:

— Ո՞ւր...

— Տուն: Հո հավիտյան չէի՞ն մնալու: Նրանց ժամանակն արդեն լրացել էր...

Այ թե ի՛նչ... Ուրեմն նրանք գնացել են... Եվ իրոք, արդեն ամսի վերջին օրերն են: Ի՜նչ աննկատելի անցավ ժամանակը...

Ճաշից հետո մենք գնացինք անտառ՝ զբոսնելու: Մենք մտածկոտ էինք և մեզանից ոչ մեկը չէր խոսում: Կարծես լուռ համաձայնությամբ բոլորս քայլում էինք մի ուղղությամբ: Երբ

հասանք մի փոքրիկ հարթակի՝ անտառապատ լանջի վրա, ստվերների տակ, մեզանից մեկը կամացուկ ասաց.

— Նրանք սովորաբար այստեղ էին նստում...

Մենք նայեցինք նրան, կարծես նա բաց էր թողել անտեղի մի խոսք: Բայց բոլորս, իհարկե, մտածում էինք նույն բանի մասին:

— Այո,— ասաց մի ուրիշը,— այստեղ էին նստում...

Մենք ավելի մոտեցանք: Մեկը մեզանից հանկարծ հարցրեց.

— Այն ի՞նչ թուղթ է ընկած այնտեղ... Երևի նրանք են մոռացել...

Բոլորս նայեցինք՝ իբրև թե անտարբեր, սակայն յուրաքանչյուրս ուզում էր ինքն առաջինը հասնել և վերցնել թուղթը:

— Գրքի թերթ է,— ասաց մեկը՝ կռանալով գետին:

Մենք մոտեցանք:

Բանաստեղծություն էր՝ ծանոթ բանաստեղծություն:

— Կարդացել են...— ասաց մի ուրիշը:

— Իհարկե, կարդացել են:

— Սիրային բանաստեղծություն է... Ինչպես ասում են՝ իրենց համապատասխան:

— Այո...

— Իսկ ե՞րբ գնացին,— հարցրեցի ես:

— Երեկ երեկոյան են գնացել: Մենք քնած ենք եղել: Նրանք հրաժեշտ են տվել միայն վարիչին և հերթապահին:

— Պահակին էլ,— ավելացրեց մի ուրիշը:

— Այո, պահակին էլ: Այսինքն՝ պահակներին: Հանգստացող ծերունին դեռ նստած է եղել պահակի մոտ:

— Իսկ ո՞ւր գնացին...

Մենք զարմացած նայեցինք այդ ասողին: Հարցն ավելորդ էր, բոլորովին ավելորդ:

— Միևնույնը չէ՞, թե ո՛ւր: Նրանք այլևս այստեղ չեն:

— Բայց ախր ովքե՞ր էին նրանք,— պնդեց նույն հարց տվողը,— այդ է ինձ հետաքրքրում:

— Նրանք սիրահարվածներ էին և երեկոները մեզ համար կուպլետներ էին արտասանում,— պատասխանեց ինչ-որ մեկը։— Իսկ թե ովքեր էին նրանք այստեղից դուրս՝ դա տվյալ դեպքում չի վերաբերում մեզ։

Նա լռեց և մենք այլևս չխոսեցինք։ Կանգնած էինք այդպես, լուռ ու մտախոհ։

Խփեց մեռյալ ժամի զանգը։ Մենք սթափվեցինք և արագ վերադարձանք։ Ուշացել էինք։ Վատ է...

Երբ մոտեցանք շենքին, ինչ-որ մեկն այնտեղից բղավեց.

— Որտե՞ղ էիք։ Մեր կոմիկը գնաց։ Շատ փնտրեց ձեզ՝ մնաք բարովի համար։

— Կոմիկը գնա՞ց...

— Գնաց։ Մի տեսնեիք, թե ինչպես սրտառուչ բաժանվեց իր ընկերոջից։ Ընկերը կանգնել էր ժայռի ծայրին ու բերանով նվագում էր, իսկ նա պարելով իջնում էր ձորը։ Այդպես պարելով էլ հասավ կայարան։ Հեռադիտակով տեսանք...

Հանկարծ երևաց կոմիկ ուսանողը։

— Բա ասում էիք, թե գնացե՞լ է,— զարմացանք մենք և անչափ ուրախացանք։

— Ինքը չի գնացողը, այլ իր ընկերը՝ մեքենավարը...

Ուսանողը մոտեցավ ու մելամաղձոտ նայեց ներքև։

— Գնաց անպիտանը,— ասաց նա։

Նա ակներև տխուր էր, թեև փորձում էր պահպանել իր ոճը։

— Եվ գիտե՞ք ինչքան պարզ հասցե ուներ... Երևակայեցեք՝ Լենինական, դեպո, այսինչին։ Ուղղակի ծիծաղելի է։

Նա բռնազբոսիկ ծիծաղեց։

Մենք նույնպես ծիծաղեցինք, բայց բռնազբոսիկ էր նաև այդ ծիծաղը։

— Ուրեմն վերցրի՞ր հասցեն։

— Այո։ Բայց դատարկ բան է։ Ոչ ես կհանդիպեմ, ոչ նա։

Ես ուզում էի պատասխանել, բայց հանկարծ երևաց հանգստի տան վարիչը։

— Ի՛նչ եք անում այստեղ... Մեռյալ ժամի զանգը վաղուց է խփել։ Մա՛րշ դեպի ննջարանները։

Մենք ցրվեցինք մեր ննջասենյակները։ Իմ ննջասենյակում բոլորն արդեն քնած էին։ Ես պառկեցի, բայց քունս չէր տանում։

Ոչ ես կհանդիպեմ, ոչ նա... Ճիշտ է ասում ուսանողը: Ինչի՞ է պարտադրում հանգստի տան ծանոթության մի ամիսը: Բացարձակապես ոչնչի: Հանդիպեցին, անցկացրին ժամանակը, բաժանվեցին: Այլևս հազիվ թե կյանքի շրջապտույտները մի անգամ ևս նրանց բերեն իրար մոտ: Իսկ եթե այդպես է, ուրեմն էլ ի՞նչ կարիք կա «Լենինական, դեպո, այսինչ»-ին, ի՞նչ կարիք կա հետագա հանդիպման կամ նամակագրության խոստումներին: Երբ ցրվի այս փոքրիկ հասարակությունը, մեզանից յուրաքանչյուրը կվերադառնա ժամանակավորապես թողած իր նախկին մեծ միջավայրը՝ նորից անմիջական փոխհարաբերության մեջ մտնելու իր նախկին և մշտական յուրայինների հետ...

Իմ ննջասենյակում փեղկերը փակ էին: Կիսախավարի մեջ ես լսում էի քնածների հանդարտ ու կանոնավոր շնչառությունը՝ քնելու տրամադրող այդ միջազգային մեղեդին: Արևի մի բարակ շերտ փեղկերի ճեղքից ընկել էր մի քնած երիտասարդի վրա և կիսել էր նրա կերպարանքը: Մի ուրիշ շերտ ընկել էր հարևան մահճակալին: Հետո ուրիշ շերտեր՝ նույնպես նեղ ու երկար: Ննջասենյակը կարծես շերտավոր վագրի մորթի լիներ: Ես նայում էի և ինձ տիրապետում էր անհաղթելի թմրությունը, մեղկ հանգստությունը: Խաղաղվում էին հույզերս, մաշվում տպավորություններս բթանում զգայարաններս և ես զգում էի, որ քնում եմ:

Երևի շատ չէի քնել, համենայն դեպս մեռյալ ժամի ավարտման զանգը դեռ չէր խփել, երբ խաղաղ արթնացա: Գուցե երազ էի տեսել և այժմ մեղմ ու աննկատելի տեղափոխվում էի հեքիաթական աշխարհից դեպի իրականը: Սակայն աչքերս արդեն բաց էի արել, բայց դիմացս դեռ տեսնում էի անիրական պատկերը: Սենյակի կիսախավարում կանգնել էր մի աղջիկ՝ թևի վրա վերարկու, գլխին՝ փոքրիկ գլխարկ: Նա ձեռքին բռնել էր մի փոքրիկ ճամպրուկ և նրա դեմքը մի քիչ թախծոտ էր: Նա կարծես սպասում էր իմ արթնանալուն: Երբ ես նայեցի նրան, նա թեթև ժպտաց, մոտեցավ մի քայլ և ասաց.

— Վե՛ր կաց, գնում եմ:

— Ո՞վ է գնում, նա՞, իմ սպիտակազգեստ աղջի՞կը... Իհարկե, պիտի գնա: Բայց ես ինչո՞ւ էի մոռացել այդ բանը...

Դրսում հռնդաց հանգստի տան ավտոն: Լսվեցին ձայներ:

— Գնանք, ուշանում եմ,— շտապեցրեց աղջիկը:

Ես վեր ցատկեցի: Սենյակում ոչ ոք չկար՝ բացի մեզանից: Բաց արեցի մի փեղկ:

— Համբուրիր և գնանք: Ավտոն սպասում է:

Նա մոտեցավ ինձ՝ ճամպրուկը ձեռքին: Ես վերջին անգամ իմ շուրթերով շոշափեցի նրա շուրթերը: Նա կամաց վար գցեց իր ճամպրուկը և փաթաթվեց ինձ: Իսկ հետո արագ պոկ եկավ և վերցրեց ճամպրուկը:

— Գնանք:

Մի՞թե վերջ... Մի՞թե ես այլևս երբեք չեմ հանդիպելու նրան...

Երբ անցնում էինք ճաշասենյակի մոտով, նա հանկարծ կանգ առավ և ցույց տվեց պատը:

— Հիշո՞ւմ ես՝ կարդացինք մեր հանդիպման առաջին օրը...

«Ո՜վ այցելուներ, լսեցեք իմ իմաստությունը, եկեք ամսի 1-ին և վերադարձեք՝ 30-ին»:

Ես ցնցվեցի: Անծանոթ իմաստասերի խոսքերն այս անգամ այնքան էլ անիմաստ չթվացին ինձ...

Ես արագ իջա ցած: Իմ ընկերուհին արդեն նստել էր ավտո: Որոշեցի ես ևս նստել, գնալ կայարան՝ նրան ճանապարհելու, բայց նա, հասկանալով իմ մտադրությունը, կռացավ դեպի ինձ և շշնջաց.

— Կարիք չկա...

Մի՞թե վերջ... Մի՞թե ես այլևս երբեք չեմ հանդիպելու նրան...

Ավտոն շարժվեց: Ես բռնեցի նրա ձեռքը և ամուր սեղմեցի: Ավտոն սլացավ: Բոլոր մնացողներս խմբվեցինք ժայռի վրա և սկսեցինք նայել հեռացողներին: Ավտոն գնաց դեպի վայրէջքը, հետո թեքվեց, կարծես ետ էր գալիս: Բայց այդ՝ ոլորապտույտներն էին, որ ստեղծում էին վերադարձի պատրանքը: Ավտոն իջնում էր միշտ ավելի վար, միշտ ավելի վար...

Ես կարծես նոր միայն սթափվեցի քնից: Այդ ինչպե՞ս: Գնացի՞ն: Նաև իմ աղջի՞կը: Բայց ինչո՞ւ իմ: Ինչո՞վ իմ... Ես հիշեցի «Լենինական, դեպո, այսինչ»-ը...

Ինչի՞ է պարտադրում հանգստի տնում ծանոթության երկու շաբաթը: Բացարձակապես ոչնչի: Հանդիպեցինք, անցկացրինք ժամանակը, բաժանվեցինք: Արդյո՞ք մենք նորից կհանդիպենք իրար... Թեկուզ և հանդիպենք, բայց այնտեղ չի լինի այս անտառը, չեն լինի այս լեռները, այս արբեցնող բնությունը, չեն լինի այս մարդիկ ու մեր առանձնացումը նրանցից, ուրեմն չեն լինի նաև մեր համբույրները:

Է՜հ, հրաժեշտ քեզ, սպիտակազգեստ աղջիկ՝ ցորնագույն թևերով ու մերկ ոտքերով...

7

Նորից մի երեկո իջավ հանգստի տան վրա: Տխուր երեկո: Հանգստացողներն զգալիորեն սակավացել էին: Շենքն ու շենքի շրջապատը խաղաղվել էին: Քանի՜ թուփ էր թափուր մնացել իր տակ նստող զույգերից, քանի՜ տեղեր էին դատարկվել: Այլևս ոչ ոք չէր հիշում սիրահարված զույգին կամ կոմիկ բանվորին, քանի որ նրանցից հետո գնացել էր նաև դերասանը, գնացել էր ծերունին, հասակավոր կինը, ջահել տիկինն իր ութ տարեկան տղայի հետ, մանդոլին նվագողը... Լողանալ սիրող երեք ընկերուհիներից գնացել էր մեկը և այժմ երկուսը շրջում էին շարունակ միասին՝ իրենց հեռացած ընկերուհու սերն ևս տարածելով իրար վրա: Ցերեկը նրանք չէին լողացել և, ըստ երևույթին, տրամադրություն

էլ չունեին այլևս լողանալու: Իսկ տղաները նրանց այլևս չէին չարացնում և այլևս «օձաձուկ» չէին անվանում:

Այդ երեկո, ավելի քան երբևէ, մենք զգացինք լույսի կարիքը: Խավարն ուղղակի հոշոտում էր մեզ, դա մենք զգում էինք առաջին անգամ: Ցավալի էր գիտակցել, որ մթության միջից յուրաքանչյուր քայլափոխում դուրս չպիտի լողան հանգստացողների ծանոթ կերպարանքները: Քանի դեռ կային նրանք, կարծես լրացնում էին լույսի պակասը: Իսկ այժմ ոչ լույս կար և ոչ նրանք...

Այդ երեկո, ավելի քան երբևէ, ես պայծառ գիտակցեցի թխադեմ երիտասարդի գործնական խոսքերի ամբողջ պոեզիան.

— Շուտով լույս կլինի, էլեկտրական լույս: Ես այսօր հեռագիր ստացա, դինամոն արդեն ուղարկել են Լենինգրադից: Իսկ, գիտե՞ս, մենք շուտով ռադիո էլ ենք ունենալու: Դժվար է առայժմ հեռախոսի գործը, բայց այդ էլ կսարքենք...

Նրա խոսքերն այսօր հնչում էին կարծես իբրև հույսի խոսքեր՝ ասված ինձ համար, մյուսների համար: Նա կարծես չէր պատմում իր ծրագրերը, այլ մխիթարում էր մեզ: Հավատացեք նրան, ամեն օր մի նորություն պիտի մտնի հանգստի տունը: Գուցե դուք դեռ չե՞ք տեսել կովերին: Նրանք արդեն այստեղ են՝ պահեստի ետևի քարե շենքում:

Նրա խոսելու ընթացքում զրուցարան հավաքվեց հանգստացողների արդեն փոքրիկ կազմը: Մարդիկ լուռ հետևում էին վարիչի խոսքերին և երևում էր, որ բոլորը թախծոտ են:

— Է՛,— բացականչեց հանկարծ վարիչը,— ես պիտի հեռանամ հանգստի տնից, տղաներ...

Ոչ ոք ձայն չհանեց. այնքա՛ն անսպասելի էին նրա խոսքերը:

Ես էի միայն, որ հարցրեցի թերահավատ:

— Կհեռանա՞ս արդյոք: Դու կատակ ես անում:

— Ոչ, կատակ չեմ անում: Հազիվ ես վարժվում հանգստացողներին, հազիվ ես մտերմանում նրանց հետ, մեկ էլ տեսար՝ նրանք գնացին և եկան ուրիշները: Սկսիր նորից նույնը: Է՛հ:

Մենք նորից լուռ էինք: Բայց մեկը խավարի միջից զվարթ արձագանքեց.

— Մի՛ տխրիր, մեզանից հետո կգան մեզ նման մարդիկ:

— Գիտեմ,— պատասխանեց նա,— կգան ձեզ նման մարդիկ: Բայց չէ՞ որ միշտ սիրելի են նրանք, ում հետ ընտելացել ես արդեն... Է՛հ, մի՛ հեշտացրեք, ընկերներ, ամեն աշխատանք ունի իր դժվարությունը: Իմ աշխատանքի դժվարությունն էլ ահա դա է: Եվ դա մի այնպիսի... Կգնամ անպայման.

— Չես գնա,— ծիծաղեց լողանալ սիրող աղջիկներից մեկը:— Դու այնքան շատ ես սիրում հանգստի տունը: Կգնա՞ս միթե...

Նա ձայն չհանեց:

— Դե լավ, թողնենք այդ մտքերը,— բղավեց մի երիտասարդ՝ աշխատելով ստեղծել զվարթ տրամադրություն:— Ավելի լավ է՝ գնանք ակումբ, մի բան կազմակերպենք...

— Ի՞նչ կազմակերպենք: Դերասանը չկա, մանդոլինը գնաց, կուպլետ արտասանողներ չունենք:

Երգիչ երիտասարդը բաց թողեց մի քանի նոտա: Ոմանք ծիծաղեցին:

— Հա, դե դու կաս, իհարկե: Բայց մի ծաղկով հո գարուն չի՞ գա:

Նորից լռություն: Բան չէր դուրս գալիս և մեր տրամադրությունը մնում էր նույնը:

— Իսկ կոմիկը գնաց...— ձիգ տվեց մեկը: Գնաց իր ընկերոջ նման:

— Ուսանո՞ղը:

— Այո:

— Մի՞թե:

— Իսկ մի՞թե դու չգիտես: Մենք բոլորս ճանապարհ դրեցինք նրան:

— Իսկ ինչպե՞ս գնաց:

— Գնաց սովորական: Ի՞նչ կատակ պիտի աներ առանց իր բարեկամի:

— Է՛հ, գնանք քնենք,— առաջարկեց մեկը:— Հիմա շուտով զանգը կխփի...

Եվ մենք գնացինք մեր ննջարանները: Իսկ զանգը դեռ երկար ժամանակ չխփեց...

8

Առավոտյան, երբ ես արթնացա, հանգստի տանը համարյա ոչ ոք չէր մնացել: Այն ննջասենյակում, որտեղ ես էի տեղավորված, ինձանից բացի չկար այլևս ոչ ոք: Նախաճաշի ժամանակ սեղանների մոտ նստոտել էին միայն մի քանի հոգի և նրանք էլ քիչ հետո պետք է ճանապարհվեին: Մենք լուռ էինք և եթե խոսում էինք էլ, ապա խոսում էինք համարյա շշուկով:

Հազիվ էինք վերջացրել նախաճաշը, երբ լսվեց ավտոյի հոնդոցը: Մենք դուրս թափվեցինք՝ ենթադրելով, թե եկան նոր հանգստացողներ: Սակայն ավտոն դեռ նոր էր գնում կայարան: Մեկնողները հրաժեշտ տվեցին մեզ և բարձրացան թափք: Մենք բութ հայացքով ճանապարհ դրեցինք նրանց և ապա ցրվեցինք տարբեր կողմեր:

Ես որոշեցի գնալ անտառ: Սակայն տխուր մի կարոտ ինձ ետ պահեց: Ինչո՞ւ գնալ այնտեղ, երբ իմ դիմաց չպիտի երևա իմ սպիտակ աղջիկը, որը շարժվի իր նստած տեղում և տեղ անի ինձ իր կողքին... Շուտ գնաց նա, ափսո՜ս: Թե՜ գուցե ես ինքս ուշ եկա...

Ոչ, ավելի լավ է թեքվել այս կողմ, դեպի օժանդակ շենքերը, մտնել խոհանոց կամ պահեստ և զրուցել հանգստի տան աշխատակիցների հետ...

Ես առաջ էլ առիթ էի ունեցել հանդիպել և խոսել նրանց հետ, սակայն շատ սակավ, հապճեպ: Նրանք ամբողջ օրն զբաղված էին իրենց գործերով, իսկ ես՝ անտառներով ու ժայռերով: Եվ միայն այժմ ես կարողացա մոտիկից տեսնել, թե որքան սքանչելի և հարգելի կին էր այդ տնտեսուհին, որն աշխատում էր զարմանալի եռանդով, գիշեր ու ցերեկ, առանց հարցնելու, թե ո՛րն է իր գործը և ո՛րն է ուրիշինը: Ես կարողացա մոտիկից տեսնել, թե ինչպես վարիչն ու մյուս աշխատակիցները շարունակ զբաղված էին այն հոգսերով, որ համեղ պատրաստեն ուտելիքները, որ լրիվ լինեն կալորիաները, որ զվարճալի և ուրախ անցնի հանգստացողների ամիսը: Իսկ հետո ես նորից անդրադարձա դեպի տնտեսուհին: Ես նրան տեսել էի ուշ գիշերներով՝ իր սենյակում նստած, սավաններ կարելիս, ես նրան տեսել էի լուսաբացից առաջ՝ ոտքի վրա, երբ նա մեզ համար վաղ նախաճաշիկ էր պատրաստում, որովհետև մենք այդ օրը գնալու էինք մոտակա պղնձահանքերը՝ էքսկուրսիայի: Մի քրոջական մեղմ արտահայտություն կար նրա դեմքին և նա մտահոգված էր հանգստացողներով՝ հարազատ քրոջ պես: Բոլորը հարգում էին նրան, բոլորը պատկառում էին նրանից և լսում նրան: Մի զարմանալի ազդեցություն ուներ մեզ վրա այդ կինը: Մենք սիրում էինք նրան: Հանգստացողները մեկնելուց առաջ միշտ ջերմ հրաժեշտ էին տալիս նրան, իսկ աղջիկներն ոու կանայք համբուրվում էին նրա հետ: Ես տեսել էի մի քանի անգամ, թե ինչպես նա արցունքն աչքերին էր ճանապարհ դնում հանգստացողներին, որոնց հետ վարժվել էր այդ մի ամսվա ընթացքում:

Եվ այժմ, իմ մանկությունից և մտքերից խուսափելու համար, ես մտա նրա մոտ: Ես ենթադրում էի մի քանի րոպե լուռ նստել այնտեղ, տեսնել իմ հանդեպ նրա համակրելի, հոգատար կերպարանքը և ամոքվել: Ես կարող էի նաև օգնել նրան որևէ բանով: Սակայն, երբ մտա ներս, իսկույն զգացի, որ եկել եմ հարցնելու նրան ինձ տանջող մտքերի պատասխանը: Եվ համոզված էի, չգիտեմ ինչո՛ւ, որ նա խելոք բան կասի, կասի այն, ինչ որ հարկավոր է ինձ...

— Տնտեսուհի,— հարցրի նրան,— ի՞նչ կասես այն մասին, որ նրանք գնացին և մնացինք մենք՝ միայն մի քանի մարդ, մենակ ու տխուր:

Նա նայեց ինձ, ժպտաց այնպիսի ժպիտով, ինչպես մայրն իր հիմար երեխային: Իսկ հետո պատասխանեց՝ առանց ընդհատելու աշխատանքը.

— Ինչի՞ց ես դժգոհում... Նրանք, որ գնացին՝ պետք է գնային, իսկ նրանք, որ գալու են՝ պետք է գան: Մեր հանգստի տունը հենց դրա համար է, որ շարունակ գնան հները և գան նորերը...

— Գնան հները և գան նորե՞րը... Իհարկե: Բայց հնարավոր չէ՞ արդյոք՝ անել այնպես, որ փոփոխությունը տեղի ունենա ոչ թե այսպես միանգամից, այլ աստիճանաբար: Թող գնա մեկը, գա մի ուրիշը, գնա երկրորդը, գա մի այլ երկրորդը: Վատ է, երբ փոխվում են բոլորը միանգամից:

Նա ժպտաց:

— Ուրեմն այդ ինչպե՞ս: Փոխարինվել ոչ թե միանգամից, երկու-երեք օրում, այլ հետզհետե, միշտ ու ամեն օ՞ր: Այդ դեպքում ո՞ւր կմնա մեր կայուն պլանը, հանգստացողների հաշվառումը, ո՞ւր կմնա յուրաքանչյուր ամսավերջի ավլում-մաքրումն ու թեթև վերանորոգումը, որ հնարավոր է միայն այս պայմաններում, երբ մի կամ երկու օրով դատարկ է մնում հանգստի տունը...

— Ճիշտ է, այդ ամենը բավական կդժվարանա,— ստիպված համաձայնեցի ես,— բայց այդ ո՞ր լավ պլանն է, որ կարող է աչքաթող անել մարդկային հոգին: Դուք պիտի մտածեք ոչ միայն մեր կենցաղային հարմարությունների մասին, ուտելիքի և հանգստի, այլև մեր տրամադրությունների ու մտքերի:

Տնտեսուհին նայեց ինձ մտածկոտ հայացքով, լուռ մնաց մի քիչ, ապա խոսեց հանդարտ.

— Այդպես կարող են մտածել միայն մնացողները, այսինքն՝ ես և դու, որ փոքրամասնություն ենք: Ոչ գնացողները և ոչ եկողները մեր վիճակում չեն և չունեն, իհարկե, այս մտքերը: Էլ ուրեմն մի՞թե իմ, քո, վարիչի, այս փոքրամասնության համար արժե խախտել մեր հանգստի տան կայուն պլանը, դժվարացնել հաշվառումը, խանգարել վերանորոգումը...

— Ուրեմն ինչպե՞ս,— բացականչեցի ես,— մի՞թե պիտի տխրենք մենք, որ կեսից ենք եկել... Մի՞թե նորից պիտի տխրենք մենք, որ կեսից պիտի գնանք: Եվ մի՞թե նույնիսկ մեր սիրելի տնտեսուհին չպիտի գտնի մխիթարության և ոչ մի խոսք մեզ՝ կեսից եկողներիս համար...

Տնտեսուհին ժպտաց, վեր կացավ, թևանցուկ արեց ինձ և լուռ դուրս ելավ առանց պատասխանի: Մենք եկանք դեպի գլխավոր շենքը, բարձրացանք դրա սանդուղքներով երկրորդ հարկ, և նա ցույց տվեց ինձ պատի վրայի գրությունը, իսկ ինքը մտավ ճաշասենյակ՝ ճաշի պատրաստություն տեսնելու: Եվ ես երրորդ անգամ կարդացի.

«Ո՛վ այցելուներ, լսեցեք իմ իմաստությունը՝ եկեք ամսի 1-ին և վերադարձեք՝ 30-ին»:

Ես նորից ցնցվեցի: Այս անգամ ես տեսա, որ բոլորովին էլ անիմաստ չէին այդ խոսքերը, այլ իրոք որ իմաստության խոսքեր, թեև ինձ համար այնքա՛ն ուշացած իմաստության...

9

Ճաշի ժամանակ իմ կողքին նստեց «օձաձկներից» մեկը,— միակը որ մնացել էր երեք ընկերուհիներից: Մեզ մոտ ոչ ոք չկար և համարյա ոչ ոք չկար ողջ ճաշարանում՝ բացի մի հաշվապահից ու կոլտնտեսուհուց, որոնք նստել էին մի հեռու անկյունում: Ես հարցրի աղջկան:

— Էլ չե՞ս լողանում:

— Ո՛չ,— պատասխանեց նա՝ իբր թե զվարթ,— հետաքրքիր չէ առանց ընկերուհիների:

— Իսկ ե՞րբ ես գնալու:

— Վաղը:

Նա գեղեցիկ ցնցեց կարճ կտրած մազերը և սկսեց ուտել: Աղջիկ էր նա, իսկական աղջիկ: Ուտելիս նա սեղանի տակ ճոճում էր ոտքերը՝ կիսակոշիկները քսքսելով հատակին: Կարճ, կես թզանոց գուլպաներից վերև թխացել էին նրա ոտքերը և տեղ-տեղ չանգռոտվել անտառի մացառներից, ծածկվել կրային սպիտակ գծերով: Երբեմն, երբ նա արագ վազում էր անտառում, նրա առանց այն էլ կարճ գուլպաների փողերը ցած էին իջնում և երևում էր, որ նրա ոտքերը գուլպաների մեջ՝ մնացել էին սպիտակ: Նա ամենից աշխույժն էր երեք ընկերուհիներից և այժմ զվարճալի էր տեսնել նրան այդպես խելոք ճաշելիս և միայն իր անհանգիստ ոտքերը շարժելիս:

Երբ վերջացրինք ճաշելը, մենք դուրս եկանք շենքից՝ անտառ գնալու համար: Նա թևանցուկ արեց ինձ: Բայց մենք դեռ չէինք հեռացել մի քանի քայլ, երբ մեր ետևում լսվեց ավտոյի հոնդոց: Մենք արագ ետ դարձանք՝ տեսնելու համար, թե ի՞նչ ընկերների և ընկերուհիների է բերում մեզ համար հանգստի տան ավտոն...

Շենքի մոտ փոշի բարձրացավ: Դուրս վազեցին վարիչը, տնտեսուհին և ուրիշները: Ավտոն կանգ առավ և այնտեղից սկսեցին իջնել վեց հոգի՝ ճամպրուկներով և վերարկուները թևերին: Նրանցից երկուսը տղամարդ էին, իսկ չորսը՝ կին: Բացի մի տղամարդուց, բոլորը երիտասարդներ էին: Եվ բոլորն անծանոթ էին իրար: Նրանք գուցե նույնիսկ վար էին իջել տարբեր վագոններից և միայն մեքենայի մեջ էին հանդիպել իրար:

Ես և աղջիկը մոտեցանք նրանց:

Եկվորները մի քիչ քաշվում էին և առաջին րոպեներին չգիտեին ի՛նչ անեն: Երևաց վարիչը, որն ուղեկցեց նրանց տեղավորելու:

— Ես այլևս քեզ հետ անտառ չեմ գա,— ժպտաց «օձաձուկը»:— Այժմ ես նորից կգնամ լողանալու: Նրանց հետ...

Այս խոսքերով նա ցույց տվեց եկած չորս կանանց և մտավ շենք, իսկ ես մնացի մենակ:

Այսպես, ուրեմն, արդեն սկսեցին գալ նորերը, անծանոթ մարդիկ... Իսկ ինձ թվում էր, թե նորից պիտի վերադառնան ուրախ ուսանողն ու նրա բարեկամը, պիտի վերադառնա ջահել տիկինն իր ութ տարեկան երեխայի հետ, ծերունի պահակը՝ չիբուխը բերանին, և ամեն ինչ նորից նույնը պիտի լինի: Ամեն երեկո դերասանը մեզ դահլիճ պիտի հավաքի, սիրահարված զույգը կուպլետներ պիտի արտասանի, հաղթանդամ երիտասարդը մանդոլին պիտի նվագի և հանգստացողներն ու հանգստի տան աշխատակիցները դարձյալ պիտի պարեն իրենց զույգապարը...

Ինձ այդպես էր թվում, բայց ահա եկել են բոլորովին ուրիշները... Տեսնես ովքե՞ր են նրանք: Տեսնես կա՞ նրանց մեջ մեկը, որ փոխարինի մեր կոմիկ ուսանողին, կամ մի ուրիշը, որ այն կոմերիտականի նման նստի ժայռերին և երգի ձորն ի վար...

Ես գնացի անտառ: Բավական հեռացա զառիվայր լանջով: Իմ ոտքերը սայթաքում էին խոտի և ծառերից թափված փշատերևների վրա: Հետո, գուցե պատահաբար, ես հայտնվեցի այնտեղ, որտեղ սովորաբար նստում էր սիրահարված զույգը: Նստեցի նրանց տեղում: Այնտեղ դեռ մինչև այժմ ընկած էր գրքի թերթիկը և մի կողմում դիզված էին կոտրատված չոր ճյուղեր: Խոսակցելիս նրանք գետնից վերցրել էին ճյուղերը, ձեռքի մեքենայական շարժումով կոտրատել և լցրել այնտեղ: Իմ անձնական փորձից գիտեի, թե որքան սովորական զբաղմունք է՝ պառկել անտառում առանց մտքերի և կոտրատել ծառից ընկած չոր ճյուղերը...

Ի՜նչ ամուր է կապվում մարդ իր միջավայրին, սատանան տանի: Ընդամենը միայն երկու շաբաթ է, որ ես անց եմ կացրել այդ մարդկանց շրջանում, իսկ այժմ արդեն կարոտում եմ նրանց: Կարոտում եմ դուրս ընկած կլթակով երգչին, կարոտում եմ սպիտակազգեստ աղջկան, կարոտում եմ ծերունուն, որ աթուրմա էր խաղում, կարոտում եմ բոլոր մյուսներին: Եվ կարոտում եմ ոչ թե նրա համար, որ նրանցից մեկը կոմերիտական էր, մյուսը՝ կուսակցական, երրորդը՝ բանվոր կամ կոլտնտեսական, չորրորդը՝ երգիչ կամ զվարճախոս: Ես ամեն տեղ և միշտ կարող եմ հանդիպել այդպիսիներին:

Ես կարոտում եմ նրանց ոչ թե որպես այդպիսիների, այլ որպես կոնկրետ մարդկանց: Ես կարոտում եմ նրանց հականե-հանվանե, հատկապես այսինչին, առանձնապես այնինչին, անձնապես երրորդին...

Զառիվայրի ներքևում խշխշոց լսվեց: Նայեցի: Գալիս էր «օձաձուկը»: Ձայն տվեցի նրան: Նա եկավ, լուռ նստեց կողքիս:

— Այնուամենայնիվ դու եկար անտառ,— ծիծաղեցի ես: Նա չպատասխանեց: Մտածկոտ էր: Բայց հետո, երբ խոսեց, նրա ձայնի մեջ չկար ոչ մի տխուր շեշտ.

— Ի՜նչ տիպեր են եկել, երևակայել չես կարող: Մեկն ընդհանրապես չի սիրում լողանալ, երկրորդը սիրում է, բայց ինքն ինձ դուր չի գալիս, շատ հպարտ աղջիկ է, երրորդը լողանում է, բայց այնքան լուրջ է, որ նրա հետ լողանալը երևի նման կլինի զեկուցում լսելու: Իսկ չորրորդին բժիշկներն արգելել են առայժմ սառ ջրում լողանալ...

— Այդպե՞ս: Իսկ ինձ թվում էր, թե նորից պիտի կազմակերպվի ձեր «օձաձկների» խումբը... Լավ խումբ էր...

— Էլ չի կազմակերպվի: Ափսո՜ս իմ ընկերուհիները: Լավ աղջիկներ էին:

— Կարոտո՞ւմ ես նրանց:

— Իհարկե, կարոտում եմ:

Հեռավոր «օձաձկներ»... Երևի այս րոպեիս նրանցից մեկը կանգնած է որևէ դազգահի մոտ, իսկ մյուսը նստել է գրասեղանի ետև... Կարո՞ղ է արդյոք նրանց մի ընկերուհին առանց նրանց կազմակերպել նախկին երրորդությունը: Մի րոպե ենթադրենք, թե կազմակերպեց: Ո՞վ պիտի այլևս նրանց «օձաձուկ» անվանի, ո՞վ պիտի սպառնա հանվել և լողանալ նրանց հետ միասին... Որպեսզի կազմակերպվի նախկին երրորդությունը, ոչ միայն հարկավոր են

ընկերուհիները, այլև անհրաժեշտ են այն երիտասարդները, այն կոմերիտականները, այն շախմատիստները... Մի խոսքով, հարկավոր է, որ վերականգնվի մեր նախկին փոքրիկ հասարակությունը... Իսկ ինչո՞ւ վերականգնվի... Մի՞թե եկվորներն ավելի վատերն են: Մի՞թե նրանք բոլորը նույնպիսի մարդիկ չեն՝ մտերիմ, սիրելի... Պետք է վարժվել սրանց, ինչպես երկու շաբաթ առաջ վարժվեցի նրանց, ովքեր այստեղ չեն: Ճիշտ է, այժմ այդ դժվար է: Առաջին անգամին այդ հեշտ էր, որովհետև ես չունեի ետ պահող հուշ, իսկ այժմ կա այդ հուշը...

— Ի՞նչ ես մտածում,— հարցրեց ինձ աղջիկը:

— Ոչինչ,— պատասխանեցի ես:— Մեկը պատի վրա մատիտով գրել էր, որ հարկավոր է գալ ամսի սկզբին և գնալ վերջին: Ըստ երևույթին նա էլ ինձ նման կեսից է եկել...

— Իսկ ես վաղը երեկոյան գնում եմ,— ժպտաց նա:— Այնքա՛ն եմ կարոտել մեր տղաներին, իմ ընկերուհիներին... Ի՜նչ երկար է տևում մի ամիսը...

— Իսկապես,— բացականչեցի ես,— ամիսը տևում է բավական երկար: Մոռանում ես, որ մինչ այդ ապրել ես ուրիշ տեղ, ուրիշ միջավայրում: Այսինքն՝ ոչ թե մոռանում ես, այլ կորցնում ես այդ միջավայրի անմիջական զգացողությունը:

— Ճիշտ է, գիտե՞ս: Ես ինքս էի ուզում ասել այդ մասին, բայց չէի կարողանում միտքս արտահայտել:

Ես նայեցի նրան: Ափսո՜ս, սիրելի աղջիկ, որ բնության մեջ ոչինչ չի կրկնվում: Այլապես, դու հիմա կբռնեիր իմ սպիտակազգեստ աղջկա տեղը, որովհետև, գիտեմ, այս սքանչելի անտառը քեզ էլ է ինձ նման դեպի սեր մղում... Բայց այն աղջիկը, դեռ չմարած իր հուշով, ինձ ետ է պահում մի նոր հրապույրից: Գիտեմ, կանցնի այդ, բայց դա՝ հետո: Իսկ այս րոպեիս ինձ համար ավելի թանկ է նրա անմարմին հուշը, քո գեղեցիկ հայացքը, որով նայում ես ինձ ու անտառին...

— Գնա՞նք,— հարցրեց նա:

— Գնանք,— պատասխանեցի ես և վեր կացա:

10

Այսօր այն օրն է, որ պիտի գա հանգստացողների հիմնական զանգվածը: Վաղ առավոտվանից ես ոտքի ելա և սկսեցի սպասել: Ուր որ է՝ ավտոն կբերի նրանց, ովքեր պիտի դառնան իմ նոր միջավայրը:

Զարմանալի է: Կհավաքի ավտոն մինչ այդ իրար անծանոթ մարդկանց, կբերի այստեղ, իսկ այստեղ նրանք կկապակցվեն, կկազմակերպվեն իբրև հասարակություն... Ես նորից զարմանում եմ նախամարդու զարմանքով, թե որքան հետաքրքիր բան է կյանքը:

Ահա հոնդաց մեքենան ներքևում՝ ճանապարհի վրա: Ահա լսվեցին ուրախ բացականչություններ: Երևի նրանք արդեն նկատեցին մեր շենքի կտուրի սուր ծայրը: Ահա երևում են նրանք: Ահա շրջվեցին վերջին ոլորապտույտով, որից հետո կմտնեն կիպարիսների ծառուղին...

Ավտոյին դիմավորեցինք ես, վարիչը, տնտեսուհին և մյուս ծառայողները: Նախորդ օրվա եկածների փոքրիկ կոլեկտիվը ճաշում էր: «Օձաձուկը» չկար: Նա պատրաստվում էր գնալ կայարան՝ երեկոյան գնացքով մեկնելու համար:

Ավտոն եկավ և դեռ հազիվ կանգ առած, այնտեղից վար ցատկեցին կենսուրախ, աշխույժ տղամարդիկ, կանայք, երիտասարդներ, աղջիկներ: Մի վայրկյանում հանգստի տունը լիացավ մարդկանց բազմությունից: Ավտոն շտապ վերադարձավ՝ ներքևում մնացած ուրիշներին ևս բերելու:

Նորեկները զվարթ սկսեցին դիտել իրենց շրջապատը, հիանալ կամ զարմանալ: Մի քանիսը վար դրեցին ճամպրուկները և իսկույն վազ տվեցին դեպի մարզափայտերը: Ոմանք մտան շենք, իսկ ոմանք ագահ հայացքներն անմիջապես հառեցին դեպի զով անտառը:

Ասել, թե նրանք բոլորովին անծանոթ էին իրար՝ չէր կարելի: Կայարանից մինչև այստեղ նրանք արդեն կարողացել էին որոշ մտերմություն հաստատել միմյանց հետ: Երբ սկսեցին նշանակել նրանց մահճակալները, նրանք ցանկություն հայտնեցին տեղավորել ըստ ծանոթության, միևնույն ննջասենյակում, իրար կողքի: Իհարկե, նրանց մեջ կային նաև հին ընկերներ, վաղեմի ծանոթներ, միևնույն վայրերից եկածներ, բայց այդպիսիները քիչ էին:

Ես սկսեցի փնտրել: Ես փնտրում էի մեր կոմիկ ուսանողին, իմ սպիտակազգեստ աղջկան, ծերուկ պահակին, «օձաձկներին»: Բայց չկար նրանցից և ոչ մեկը, չկար ոչ մի համապատասխան մարդ՝ նրանց թափուր տեղերը լրացնող:

Դե լավ, ի՞նչ կա որ, երևի նրանք կգան ավտոյի երկրորդ կամ երրորդ դարձին: Բայց այդ դեպքում ովքե՞ր են սրանք, այս կոմերիտականները, այս բանվորները, այս մանածագործուհիները... Նախկին հանգստացողներից որո՞նց են արդյոք համապատասխանում սրանք: Իհարկե, ոչ մեկին...

Ավտոն նորից եկավ և նորից բերեց անծանոթ մարդկանց: Նորից ուրախ մարդիկ, նորից՝ կյանքով լի, նորից անտառի և բնության կարոտ: Ես նայում էի նրանց և նրանց մեջ առայժմ չկար ինձ համար ոչ մի կոնկրետ անձնավորություն, չկար որևէ մեկը՝ հականե-հանվանե: Նրանք դեռ ընդհանուր կերպարանքներ էին՝ կոմերիտականի, բանվորի, կոլտնտեսական կնոջ, սպորտսմենների, ընթերցողների, ուսանողների...

Սակայն որքան էլ ընդհանուր կերպարանքներ լինեին նրանք, այնուամենայնիվ ես նրանց մեջ կնկատեի մեր դերասանի նման մեկին՝ եթե նա գտնվեր, կնկատեի այն հասակավոր կնոջը, որը հաճախ նստարանի վրա անշարժ նստած, նայում էր բնությանը: Իսկույն կնկատեի նրանց:

Բայց նրանք չկային:

Ոչ, նրանք չկային նույնիսկ այն ժամանակ, երբ ավտոն դատարկվեց երրորդ անգամ և գնաց իրեն հատկացված անկյունը՝ հանգստանալու:

Ինչո՞ւ, ինչո՞ւ ես փնտրում նրանց, ովքեր փոխվեցին: Մի՞թե նույնպիսի ընկերներ չեն սրանք...

Իմ ականջներում հանկարծ հնչեց.— եկեք ամսի 1-ին և վերադարձեք՝ 30-ին:

Գանք ամսի մեկի՞ն... Այդ, իհարկե, շատ լավ կլինի, անծանոթ իմաստասեր: Իսկ եթե ես եկել եմ ամսի կեսի՞ն... Ոչ, անծանոթ իմաստասեր, դու խոսել ես միայն նրանց լեզվով, ովքեր գալիս են սկզբից, իսկ ովքեր կեսից են գալիս, դու նրանց բոլորովին նկատի չես առել:

Բայց գիտեմ, ով անծանոթ իմաստասեր, որ դու այդպիսի մտքեր չէիր ունենա, այդպիսի խոսքեր չէիր գրի, եթե ինքդ նույնպես եկած չլինեիր ամսի 15-ին: Դու էլ ես կեսից եկել, սիրելի ընկեր, դու էլ ես մտածել ու փիլիսոփայել, դու էլ ես փնտրել լուծում ու վճիռ, և հետո, ձեռնաթափ, անհույս ու թախծոտ, հայտարարել ես, որ միակ լուծումն է՝ գալ ամսի 1-ին և վերադառնալ՝ 30-ին...

Դու սխալվում ես, սիրելի ընկեր: Ես դեռ չգիտեմ, թե ինչով եմ ես ճիշտ, բայց որ դու սխալվում ես՝ դա ակնհայտ է ինձ համար...

11

Ես այօր գլխի ընկա, որ իզուր եմ փնտրում եկվորների մեջ «օձաձկներին», մանդոլին նվագողին և բոլոր մյուսներին: Այն, ինչ եղել է երկու շաբաթ առաջ, կարող է և չկրկնվել երկու շաբաթ հետո: Ավելին՝ չի կարող կրկնվել երկու շաբաթ հետո...

Ես մտածում եմ «օձաձկների» մասի՞ն: Իզուր եմ մտածում: Եկվորների մեջ չկա ոչ մի «օձաձուկ»... Եթե նույնիսկ վերադառնան այն երեք ընկերուհիները, այժմ նրանք այլևս «օձաձուկ» չեն լինի, որովհետև ուրիշ են այս եկվորները և ուրիշ են նրանցից յուրաքանչյուրի տեղերը:

Ուրեմն իմ տեղն էլ պիտի փոխվի... Այդպես է երևում: Իհարկե, ես դարձյալ չեմ դառնա կոմիկ կամ տրագիկ, սիրահար կամ փիլիսոփա, չեմ դառնա տիպ, բայց կդառնամ բոլորովին այլ բան, քան հիմա եմ...

Պիտի փոխվեմ ես՝ ուզեմ, թե չուզեմ... Ուրեմն ավելի լավ չէ՞, որ փոխվեմ իմ բարի կամքով, որպեսզի իմ տեղն ընտրված լինի ոչ միայն նրանց ցանկությամբ, այլև իմ...

Եվ ես մրցահրավեր նետեցի պատի վրա իր խոր փիլիսոփայությունը թողած անծանոթ իմաստասերին: Դու ասում ես՝ պետք է գալ ամսի 1-ին և վերադառնալ՝ 30-ին: Իսկ ես կապացուցեմ, որ կարելի է նաև գալ 15-ին և գնալ մյուս 15-ին... Կտեսնես, որ

կապացուցեմ: Կարևորն այն է, որ ես մոռանամ, թե ինչպես խավարում աղոտ առկայծում էին նավթի լամպերը, որոնք գնում էին դեպի դահլիճ, որ ես մոռանամ այն թախծոտ երգը, որ հնչում էր նույն ժամին՝ անտառի խավարից, որ ես մոռանամ, թե ինչպես մի աղջիկ ամեն օր փնտրում էր ինձ և ցանկանում, որ գնանք միասին անտառ, որ ես մոռանամ կոմիկ բանվորին, որը հենց այդպես պարելով էլ հասավ կայարան...

Իսկ այնուհետև, երբ ես մոռանամ նրանց բոլորին, կտեսնեմ, որ կան կյանքում ուրիշ անթիվ-անհամար մարդիկ՝ նույնքան սիրելի... Ես կընտելանամ սրանց հետ այնպես, ինչպես մի օր ընտելացա նրանց հետ...

Իմ մտքերի թելն ընդհատվեց: Բայց ինձ խանգարողը մի այլ միտք չէր, այլ իմ խաղընկերը, որի հետ ահա երկու օր էր, ինչ ես շախմատ էի խաղում:

— Ե՛կ, խաղանք մի քիչ:

Մենք գնացինք ակումբ և նստեցինք խաղասենյակի մոտ: Իսկույն մեր շուրջը հավաքվեցին տղաներ և աղջիկներ, որպեսզի հետևեն խաղի ընթացքին:

— Դե, ի՞նչ, շարենք մեր քարերը...

Մի երեսնամյա գեղեցիկ կին ամենից շատ էր հետաքրքրվում խաղով: Ամեն օր, երբ որ խաղայինք՝ մենք, թե ուրիշները, նա կգար, կնստեր և կսկսեր դիտել: Նա չէր միջամտի մյուսների նման, չէր անի տեղի-անտեղի ցուցմունքներ: Սակայն նրա աչքերը, բառերից ավելի պերճախոս, արտահայտում էին մերթ քաջալերանք, մերթ հանդիմանություն:

Ահա մեզ մոտեցավ մի նիհար երիտասարդ՝ չափազանց լուրջ դեմքով: Նա լրջություն չէր ձևացնում և նրա դեմքն իրոք այդպես էր բնականից: Սակայն չկար հանգստացողների մեջ ավելի զվարճալի արարած, քան այդ երիտասարդը: Գալու օրվանից նա մտավ երեխայի դերի մեջ և այդպես էլ մնաց:

Հենց առաջին օրը նա գտավ տակառի մի ժանգոտ օղակ և սկսեց գլորել: Գլորում էր լուրջ դեմքով, մտախոհ, ինքնամփոփ: Իսկ երբ գալիս էր ճաշելու, նա օղակը կապում էր որևէ ծառից, որպեսզի չփախչեր ինչպես ձի: Իսկ հետո, ապահովանալու համար, որ ձին իր տեղումն է, նա ճաշելիս մերթ-մերթ մոտենում էր լուսամուտին և նայում: Մենք ծիծաղում էինք բարձր քրքիջով, իսկ նա չէր էլ նայում մեզ, կարծես մենք գոյություն անգամ չունենք նրա համար: Իսկ ճաշից հետո նա դուրս էր գալիս և մոռանալով իր օղակը, գնում էր անտառ և մագլցում ծառերի վրա:

Մի անգամ, երբ օդն անշարժ էր և շատ տոթ էր նույնիսկ այդտեղ՝ սարի վրա, մենք նստոտել էինք դեսուդեն՝ արևից թմրած: Մենք անտառ չէինք գնում, որովհետև մի քիչ հետո պետք է խփեր մեռյալ ժամի զանգը: Բոլորս լուռ էինք և մի տեսակ՝ տրամադրություն չկար որևէ բան ասելու:

Եվ հանկարծ մի հաստ ճյուղի վրա հեծած, արագ ցատկոտելով և բարձր խրխնջալով, մեր առջևով սլացավ այդ նիհար և շատ լուրջ երիտասարդը: Նրա խրխնջոցը մարեց հեռվում, և նա այլևս չվերադարձավ: Մենք բոլորս թուլացանք ծիծաղից, այնքան հակասական էին

նրա դեմքի լուրջ արտահայտությունն ու նրա արարքը: Ահա այդպիսին էր նա՝ համառոտ, բայց շեշտակի: Անում էր մի բան, որը տևում էր միայն մի վայրկյան, բայց որը չէիր կարող մոռանալ ամբողջ օրը և չծիծաղել ինքդ քեզ: Իսկ նա այդպիսի որևէ արարքից հետո առանձնանում էր և երկար ժամանակ կարդում: Մարդկանց հետ խոսում էր շատ սակավ և երբեք ինքը չէր լինում սկսողը: Երբ ես հետաքրքրվեցի, թե ով է նա, դուրս եկավ, նա ֆիզիկո-մաթեմատիկական ինստիտուտի ասպիրանտ էր:

Ես խաղը տարվեցի ու վեր կացա: Երեսնամյա գեղեցիկ կնոջ աչքերն ուղղակի հանդիմանում էին ինձ:

Ես հարց տվեցի նրան.

— Մի՞թե հնարավոր էր այլ կերպ...

— Դուք շատ անփույթ խաղացիք,— ասաց նա:

— Դուք այդպե՞ս եք կարծում,— հարցրեցի ես:

— Թեև ես շախմատիստ չեմ, բայց ինձ այդպես է թվում,— կրկնեց նա:— Դուք խաղացիք ուղղակի սիրահարվածի պես...

Մենք ծիծաղեցինք, և ես վերցրի նրա թևը:

— Թույլ կտա՞ք ուղեկցել ձեզ անտառ:

— Այդպես հանկարծակի՞: Իսկ եթե ես անտառ չեմ գնո՞ւմ...

Ես շփոթվեցի: Նրա աչքերն ուղղակի ամաչեցնում էին ինձ:

— Գնանք,— ծիծաղեց նա ինձ վրա,— ես անտառ եմ, գնում:

— Դուք ամուսնացա՞ծ եք,— հարցրի ես նրան՝ ճանապարհին:

— Իսկ դա կարևո՞ր է որևէ տեսակետից,— հարցրեց նա շեշտակի: Ու թեև նրա տոնը զվարթ էր, բայց ես ամաչեցի իմ անտեղի, համենայն դեպս՝ անժամանակ հարցի համար:

Նա լրջացավ, մտածեց մի պահ և պատասխանեց.

— Ես ամուսնացած էի: Իմ ամուսինը, ինչպես ասվում է, միանգամայն նոր աշխարհի մարդ էր, սակայն մի բացառությամբ: Նա խանդոտ էր: Չէր կարող տանել, որ ես աշխատեի և իմ աշխատավայրում շփվեի ուրիշ տղամարդկանց հետ: Ուղղակի տանջվում էր: Փորձում էր մտածել այլ կերպ, գիտակցում էր, որ հիմարություն է արածը, բայց ոչինչ չէր օգնում: Նկատի ունեցեք, երիտասարդ, կենցաղային այս մանրամասնությունը: Կյանքում պետք կգա ձեզ:

— Իսկ հետո՞,— հարցրի ես՝ նրա պատմությամբ հետաքրքրված:

— Հետո այն, որ ես նրան ապահարզան առաջարկեցի: Նա համաձայնեց: Եվ երբ արդեն զգաց, որ ես այլևս իր կինը չեմ, մոռացավ խանդելը: Իհարկե, մենք նորից հանդիպում էինք միմյանց, զբոսնում, գնում կինո կամ թատրոն, հաճախ միասին գիշերում, բայց այժմ նա չէր խանդում ինձ, որովհետև ես նրա կինը չէի, ես ազատ մարդ էի, ինչպես և ինքը: Տարօրինակ են լինում երբեմն մարդիկ, երիտասա՛րդ: Եվ ես այս բոլորը ձեզ պատմում եմ միայն նրա համար, որ տեսեք, թե որքա՛ն հիմար կարող է լինել երբեմն խանդը...

Նա լռեց:

— Շարունակեցեք,— հետաքրքրվեցի ես,— իսկ ի՞նչ եղավ հետո:

Նա ծիծաղեց:

— Եղավ այն, որ հիմա մենք նորից ամուսիններ ենք: Մեզանից ոչ մեկը չի խանդում մյուսին, չի կասկածում մյուսի վրա: Մենք սիրում ենք և հավատարիմ ենք միմյանց, ինչպես միշտ: Տարօրինակ չէ՞, երիտասարդ:

Այո... Այդ կինն իր պատմությամբ տվեց ինձ մտածելու մի մեծ, հետաքրքիր նյութ: Բայց ես չշտապեցի մտածել այդ մասին իսկույն, հապճեպ: Ընդհակառակը, ես դա պահեցի ավելի ազատ ժամանակի համար: Իսկ այժմ ես մտածեցի մի այլ բանի մասին: Ես հասկացա, թե ո՛վ էր լինելու այդ կինն ինձ համար երկու շաբաթ շարունակ.— խելոք և հաճելի ընկերուհի, ավագ ընկերուհի...

Ես հանկարծ հիշեցի, որ գործ ունեմ հանգստի տանը:

— Ներեցեք,— ասացի շտապ-շտապ,— ես գործ ունեմ այնտեղ: Մոռացել էի...

Եվ որպեսզի չթվամ շատ անքաղաքավարի, ավելացրի.

— Վաղը դարձյալ միասին կգանք անտառ՝ եթե դա տհաճ չէ ձեզ: Ես շատ եմ ցանկանում հանդիպել ձեզ հետ...

Եվ արագ գնացի, համարյա վազ տվեցի: Այդ ինչպե՞ս կարող էի մոռանալ, որ այնտեղ ինձ սպասում են մի քանի տասնյակ մարդիկ...

Երբ հասա շենքի մոտ, նրանք արդեն հավաքվել էին այգում, պայմանավորված տեղում, և սպասում էին ինձ: Նրանք այն հանգստացողներն էին, որոնք ցանկություն էին հայտնել զրույցներ ունենալ գիտական նյութերի շուրջը: Ես մոտեցա նրանց և դեռ տեղ չհասած, շարունակեցի երեկվա կիսատ թողած զրույցս, որի մասին քիչ էր մնացել, որ մոռանայի:

— Ուրեմն, ընկերներ, գալով փշատերև ծառերին, պետք է ասել, որ դրանց սաղարթների բույրն ամենից առողջարարն է թոքերի համար: Ահա այս է պատճառը, որ մեր հանգստի տան նախկին հարուստ տերը եղևնիներ է տնկել այստեղ: Ինչպես գիտեք, Լոռում սովորաբար եղևնիներ չկան: Սակայն հին ժամանակներում, ինչպես երևում է, այս անտառներում բավական քանակությամբ եղել են նաև այդ ծառերից: Օրինակ, մի քանի հին դամբարանների վրա քանդակված են եղևնու գնծիկներ... Հանգստի տան ավտոն

գնացել է քաղաք՝ մթերք բերելու: Երբ վերադառնա, կխնդրենք վարիչին, որ նա ավտոն տրամադրի մեզ՝ էքսկուրսիայի գնալու դեպի այդ դամբարանները և այլ հնությունները: Իսկ եղե՞լ եք դուք արդյոք պղնձի հանքերում...

— Ո՛չ, ո՛չ, չենք եղել,— լսվեցին ձայներ:

— Ուրեմն կգնանք նաև հանքերը: Ահա տեսնում եմ, որ ձեր մեջ նստած են մի քանի հանքափորներ: Խնդրենք նրանց, որ հետևյալ զրույցին պատմեն մեզ իրենց աշխատանքի մասին: Հարկավոր է նախապատրաստված գնալ հանքերը...

12

Երեք կոմերիտականներ կազմակերպեցին դաուլ-զուռնա: Զուռնաները բերեցին հարևան գյուղից, իսկ դաուլ՝ ոչ մի կերպ գտնել չկարողացան: Հարցը լուծվեց նրանով, որ վարիչը տրամադրեց մի դույլ:

Եվ ահա նվագախումբն սկսեց նվագել: Դուրս եկավ սպասածից ավելի հաջող: Բոլորն ուրախացան, ոգևորվեցին և որոշեցին հարսանիք կատարել: Մի երիտասարդ հագավ աղջկա շորեր, մյուսը դարձավ փեսա և սկսեցին պսակը: Զուռնայի ձայնը լսելով, գյուղից նույնպես եկան մարդիկ: Արդեն մութն էր: Ստիպված՝ հարսանիքը վերջացրին և հենց այդպես նվագելով մտան դահլիճ, որտեղ երեկույթ պիտի տեղի ունենար:

Ես պիտի արտասանեի այդ երեկույթում: Երբ բարձրացա բեմ, հանկարծ աչքովս ընկավ երեսնամյա տիկինը, որ նստել էր վերջին աթոռներից մեկի վրա և ինձ էր նայում: Ես շփոթվեցի, բայց արտասանեցի բավական հաջող և ստացա ծափահարություններ, թեև ոչ այնքան առատ:

Իջնելով դահլիճ, ես մոտեցա տիկնոջը:

— Իսկ երգել չգիտե՞ք,— հարցրեց նա:

— Գիտեմ: Եվ նույն հաջողությամբ: Ուզո՞ւմ եք:

— Ոչ, ոչ, խնդրում եմ,— անհանգստացավ նա:

— Զգնա՞նք անտառ,— հարցրի ես նրան՝ ըստ սովորականի:

Մենք երկար զրուցեցինք՝ շրջելով անտառով: Մեր միջև ստեղծվել էր այնպիսի ընկերական պարզ մտերմություն, որ վերադառնալիս ես մի պահ կանգ առա, սեղմեցի նրա ձեռքը և ասացի ուղղակի.

— Ինձ շատ, շատ հաճելի է ձեզ հետ հանդիպելը: Դուք ինձ ճիշտ հասկանո՞ւմ եք:

Նա ժպտաց.

— Միանգամայն ճիշտ: Բարի գիշեր ձեզ, երիտասա՛րդ: Ցտեսություն մինչև վաղը՝ մեռյալ ժամից հետո:

— Ցտեսություն,— պատասխանեցի ես:— Մինչև վաղը՝ մեռյալ...

Իմ խոսքը մնաց կիսատ: Ես ցնցվեցի: Վա՞ղը...

Այդ ինչպե՞ս էի մոռացել, որ վաղը ես պետք է մեկնեմ...

13

Նախաճաշի ժամանակ շատերը տխուր են: Մի՞թե ես եմ պատճառը...

— Իսկապես,— շարունակում է համոզել ինձ մեկը՝ հարևան սեղանի մոտից,— կաց ևս մի քանի օր: Իզուր ես գնում այդքան շուտ: Կա՛ց և լավ հանգստացիր:

— Իմ ժամանակն արդեն լրացել է,— ժպտում եմ նրան:— Իսկ քաղաքում գործերս սպասում են ինձ:

— Ափսո՛ս,— ասում է մի ուրիշը:— Կգնայինք միասին էքսկուրսիա: Ավտոն արդեն վերադարձել է: Նորից կգնայինք մորի քաղելու...

Վարիչը մտնում է ներս:

— Կա՛ց, էլի, ի՞նչ տարօրինակ տղա ես,— ասում է նա ինձ՝ ընկերական հանդիմանությամբ: Կմնաս հանգստի տան հաշվին: Որպես կուլտուրնիկ: Մի երկու օրից էլեկտրական լույս ենք ունենալու: Մենք շատ երազեցինք միասին, հիմա աչքովդ կտեսնեիր...

Ես տատանվում եմ: Երեսնամյա կինը, որն այսօր ինձ մոտ է նստած, նայում է ինձ և ժպտում: Այո, սիրելի կին, ավագ ընկերուհի, դու էլ կաս իմ տատանման պատճառների մեջ, վարիչն էլ, նիհար երիտասարդն էլ՝ իր ժանգոտ օղակով կամ փայտե ձիով, դաուլ-զուռնաչիներն էլ, հասակավոր այն զույգն էլ, որն այս լեռնային արևի տակ տաքացնում է իր սիրո աշունը: Բոլորդ կաք, բոլորդ, ում հետ ապրել եմ ընդամենը երկու շաբաթ: Ես հիշում եմ հստակ, որ դեռ ոչ մի անգամ չեմ տարել շախմատի իմ խաղակցին: Դա խայտառակություն է, բայց այլևս ժամանակ չունեմ: Ի դեպ, չմոռանամ ասելու վարիչին, որ դռնակի մոտ այգու ցանկապատը պետք է նորոգել, կովերը կարող են մտնել այնտեղ:

Բոլորդ, բոլորդ...

Իսկ տնտեսուհի՞ն... Ամենից ավելի ես նրան պիտի կարոտեմ... Ես միայն հիմա եմ զգում, թե որքա՛ն վատ է, ես քիչ անգամներ եմ առիթ ունեցել հանդիպելու նրան և զրուցելու նրա հետ...

Դրսում լսվեց ավտոյի ծանոթ հոնդոցը: Ես վեր կացա:

— Դե, մնաք բարով,— բացականչեցի ես՝ դիմելով բոլորին։— Կազդուրվեցեք...

— Գնաս բարով, գնաս բարով, բարի ճանապարհ,— ձայն տվեցին չորս կողմից։— Գնաս բարով...

— Վատ է, որ հիմա ես գնում,— ասաց մեկը, երբ ձայները մի քիչ հանդարտվեցին,— լավ կլիներ, եթե մեզ հետ եկած լինեիր և մեզ հետ էլ գնայիր...

Ինչպե՞ս... Ամսի 1-ից մինչև 30-ը։ Դարձյա՞լ այդ իմաստությունը...

— Ո՛չ,— ժպտացի ես,— կարելի է նաև 15-ից մինչև մյուս 15-ը։ Ի՞նչ կա որ...

Եվ դուրս ելա ճաշարանից։ Նախքան ցած իջնելը հանեցի մատիտս և անծանոթ իմաստասերի խոսքերի տակ գրեցի իմը.

«Կարելի է նաև գալ ամեն օր և գնալ ամեն օր»։

— Ճիշտ է։

Ես շրջվեցի։ Նա էր՝ իմ երեսնամյա ծանոթուհին։

— Ճի՞շտ է,— հարցրի ես։— Իսկ դուք չե՞ք ափսոսում, որ մենք բաժանվում ենք։

— Իհարկե, ափսոսում եմ,— ասաց նա պարզ և հասարակ։

Ես նստեցի ավտո։ Շենքից դուրս եկան բոլոր հանգստացողները՝ ինձ ճանապարհ դնելու, ինչպես մի օր ես էի ճանապարհ դրել բոլոր հանգստացողներին։

— Դե, մնացեք բարով...

— Բարի ճանապարհ...

Ավտոն հոնդաց, ցնցվեց, բարձրացավ փոշի և հանգստի տունն ու հանգստացողները մնացին ետևում։ Ես խորապես ափսոսացի, որ բաժանվում եմ նրանցից։ Նրանք՝ այդ նորերը, իմ միջից արդեն դուրս էին մղել նրանց, ովքեր գնացել էին երկու շաբաթ առաջ։ Ես զգում էի, որ ճիշտ գրեցի իմ իմաստությունն այն հին իմաստության տակ։

Շենքն անհետացավ։ Ես ժպիտով դարձա դեպի շոֆերը և հարցրի։

— Միայն ի՞նձ համար ես լծել ավտոն...

— Ոչ,— բղավեց նա մեքենայի հոնդոցի միջից,— ես գնում եմ կայարանից հանգստի տուն փոխադրելու մեր դինամոմեքենան։

1933